



ՀԱՅԵՐԱՆՈՐ ԱՄՍԱԹԵՐԻ ԱՄԵՆՈՒՆ ԲԱՄԱՐ
 "PAPÈRE"
 REVUE MENSUELLE RELIGIEUSE ARMÉNIENNE
 ORGANE DES ÉGLISES ÉVANGÉLIQUES ARMÉNIENNES DE FRANCE


Téléphone C. 03-97

Rédaction et Administration :
 7, Rue Papère — MARSEILLE

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԺԵ. ՏԱՐԻ - ՅՈՒՆԻՍ 1939 15^{me} Année - Juin 1939

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ — Քրիստոսի անոյշ հոսք (Յ. Ն. Ղ.)	81
ՀՈԳ. ԿԵՍՆԲ — Գոհունակութեան գողտնիքը (Թրգմ. Ն. Մ.)	83
ԵՐԿՈՒ ՃԱՄԲԱՆԵՐ — Հրեայ Ռաբբիի մը դարձը (Մ. Յ. Պօղոսյան)	84
— — Ողբերգական էջ մը (Սամուէլ Պ.)	86
Ս. ԳՐԱԿԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ — Թագաւորութեան Խորհուրդը Նոր Կտակարանի մէջ (Scofieldէն)	87
ՇՈՂԵՐ ԵՒ ՇԱՂԵՐ ԿԵՆԱՅ ԱԾՈՒՆԵՐԷՆ — Ոտական մը ինչպէս դարձի եկաւ — Գործնական սէր — Սիրեցէ՛ք ձեր թշնամիները — Ինչպէ՛ս ձուկ որսաւու է — Ո՛հ, թեւերդ տարածէ (Հաւաքեց՛ վեր. Ժ. Կ. Պ.)	89
ՃԷՅՄՍ ՀԸՏԱԸՆ ԹԷՅԼԸՐ — Հրտարնի փորձութիւնները Լոնտոնի մէջ — Նոր ճամբաներ (Թրգմ. Ն. Մ.)	90
ՊԱՏԱՆԵԱՅ — Տէրոջ Արտին մէջ (Ժ. Կ. Պ.)	94
ՄԱՆԿԱՆՅ — Կիլական սուրբ պաշեւ (Թրգմ. Յ. Ք.)	94
— Կեցէք, նայեցէք, մտիկ ըրէք (Հին ժամանակի Պատմութիւններէն)	95
ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ — Սամուէլ եղբ. Պագաւաւեանի տեղեկագիրը (Սամուէլ Պ.)	96
ԵՐԳ — Քրիստոս մեր կեանքը (Թրգմ. Յ. Ն. Ղ.)	Կողքին Յոր էջին վրայ



ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսագրերը եւ Գրանսահայ Աւետարանա-
կան եկեղեցիներու պաշտօնագրերն է, այսու ամենայնիւ,
նպատակ ունի ծառայելու ամենուն, որոնք ճշմարտութիւնը
կը փնտռեն եւ ծարար կըզգան Աստուծոյ խօսքին անխաղախ
վկայութեան: Քանի որ Քրիստոս չեկաւ միայն կարգ մը
անհատներու համար, այլ ամենուն, բոլորի ճշմարիտ «Բաժին»
ներկայացուցիչն ալ չճանչնար ո եւ է յարսմունքանութիւն մը,
հասկա մէկ է անոնց հետ, որոնք Քրիստոսի մէջ իրեն կը
միանան: ԲԱՆԲԵՐ կ'ուզէ ծառայել անոնց:

«ԲԱՆԲԵՐ» հոգեւոր ամսագրերը կը հրատարակուի Մարտէլլի մէջ 16 էջերով (կողքէն զատ
անոր խմբագրական ժարմինն անդասներն են
վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ, վեր. Ժ. Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ, վեր. Ա. Օ. ՓԱՍՏԵԱՆ, վեր. Զ. Բ. ՊՈՒՏԱՔԵԱՆ
Բրժժ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ, Պատ. Վ. ՍԱՀԱԿԵԱՆ, Պատ. Ի. ԱԲԲԱԶԱՄԵԱՆ, Պատ. Մ. ՎԷՔԻԼԵԱՆ

ԲԱՆԲԵՐԻ համար յօդուած կրնան գրել անոնք միայն, որոնք
գիտեն վերստին ծնունդն ու հոգեւոր կեանքը եւ անոր մէջ
ապրելու ամենօրեայ ուրախութիւնը կը վայելեն Քրիստոսով:
Յօդուածադրքեր մինչեւ որ ամբողջութիւնով խմբագրութեան
ծեռքը չհասնին, նկատի չեն առնուիր:

Յօդուածներ կարելի եղածին չափ ընծեռելի եւ մեղանով գրուած
թուղթին մէջ կողմին վրայ միայն եւ ԿԱՐՃ ըլլալու են: Խմբա-
գրութիւնը յօդուածները յապաւելու եւ սրբագրելու եւ օգտակար
դարձնելու համար փոփոխութիւններ ընելու ինչպէս նաեւ զանոնք
չհրատարակելու իրաւունքը իրեն կը վերապահէ, քանզի իրօք
կուգան լաւ յօդուածներ որոնք երբեմն կրկնութիւն են
առաջուրէն հրատարակուած խորհուրդներու: Այսպիսիներ զանց
կ'ընենք, ուրիշ յօդուածներու տեղ ապու համար:

ՊԱՏԱՊԱՏԱՆՈՒԹՅՈՒՆ

ԲԱՆԲԵՐԻ բաժանորդագրութիւնը տարեկան է եւ կանխիկ
բաժանորդագրութիւնը կ'սկսի ամէն տարի Յունուարին
եւ կը վերջանայ Դեկտեմբերին:

— ԲԱԺՆԵԳԻՆՆ Է —

Ֆրանսա 25 ֆրանք, Սուրիա 20 ֆրանք
Արտասահման Տոլար 1. 25

Դ Ի Ի Ր Ո Ի Թ Ե Ա Ն Հ Ա Մ Ա Ր
ՀԵՏԵԻԵԱԼ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆԸ

Ամերիկայէն travelers check, թղթադրամ
եւ ամերիկեան նամակադրօշմ կրնայ ղրկուիլ:
Ուրիշ երկիրներէ \$ 1.25ի համարժէք ամէն տեսակ դրամ:
Յօդուածներ ղրկուելու են Պատ. ՎԱՀԱՆ ՍԱՀԱԿԵԱՆԻ
խսկ թղթակցութիւններ եւ դրամական առաքումներ
վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆԻ անունով, երկուքն ալ
հետեւեալ հասցէով:—

Réd. «PANPÈRE» c/o Rev. H. N. GHAZAROSSIAN
7, Rue Papère
MARSEILLE (France)

Մանտայով դրամական առաքումի առթիւ հաճեցէք մանտային վրայ գրել
H. N. Ghazarossian, 7, rue Papère - Marseille (France) C. C. Nb. 182.53-Marseille

Արձնցի՛ր դուն
որ կը քնանաս, եւ
կանգնէ մեռելն.
րէն, ու Քրիստոս
քեզի լոյս պիտի
տայ:
Եփես. Ե. 14

Քանզի ալ աս-
կէ քիչ մը ատենէն
Ան որ գալու է՝
պիտի գայ ու պի-
տի բուշանայ:

Ուրեմն ա՛լ վախճանք, որ չըլլայ թէ
Անոր հանգիստը մտնելու խոստմունքէն որ մեզի մնացեր է,
ձեզմէ մէկը զրկուած գտնուի: Երբ. Դ. 1

Երբ. Ժ. 37

ԺԵ. ՏԱՐԻ

3 ՈՒՆԻՍ 1959

ԹԻԻ 6

ԻՆՉ ԵՆ ՀԱՌԱՏԱՅԵԱԼՆԵՐԸ



ՔՐԻՍՏՈՍԻ ԱՆՈՅՇ ՀՈՏԸ

Վասնզի մենք Աստուծոյ առջեւ Քրիստոսի անոյշ հոտն ենք
փրկուածներուն մէջ եւ կորսուածներուն մէջ:



Բ. Կոր. Բ. 15

Այս քանի մը տարիներ առաջ, երբ կը
ճամբորդէի Côte d'Azur-ի եզերքն ի վար միջին
նիս, պատեհութիւնն ունեցայ նաեւ գտնուելու
Grasse անուն պղտիկ քաղաքը, որ իր անուշա-
հոտութիւնովը թարմ ու մնայուն ազդեցութիւն
մը ձգեց մտքիս ու նաեւ սրտիս վրայ:

Դեռ ճեպընթացին մէջ կը գտնուէինք, քանի
մը քիւսմէթը հեռու քաղաքէն, մէկէն յուշաբե-
րեցայ մեր խցիկը լեցնող անուշահոտութենէն:
Սկսաւ բոլորտիքս նայիլ: Սակայն քովս միակ
այր մարդէ մը գատ մէկը չէր գտնուեր,
ու այն ալ ո եւ է անուշահոտ իւղ մը թա-
փած չէր իր կամ թաշկինակին վրայ, և ես չէի
կրնար զարմանքս չյայտնել իրեն, որ ինձ նշան
ըրաւ դուրս նայելու: Ու ի՞նչ տեսնէի, ճեպըն-
թացը կ'անցնէր ծաղկի արտերու մէջէն: Տեսայ
արտեր վարդենիներու, բուրաստաններ մեխա-
կենիներու, յասմենիներու և ամէն տեսակ
ծաղկետունկերու, որոնց խնամեալ դաշտերը և
անոնց պէսպիսի և գունաւոր ներդաշնակութիւնը
բանաստեղծներու ներշնչման և գեղեցիկ տաղե-
րու տուն տուած են անկասկած:

Ճեպընթացը հասած էր կայարանը և մենք
կը բարձրանայինք դէպի քաղաքը, որու թաղա-
մասերէն անցնելուս անուշաբոյր հոտերը աւելի
զօրաւոր կերպով կը բուրդէին: Ամբողջ մթնոլոր-
տը լեցուած էր այդ բուրու միաւէտ հոտերով:
Վերջապէս բարեկամի մը միջոցաւ բացատրուե-
ցաւ ինձ թէ Ֆրանսայի, նոյնիսկ աշխարհի
ամենագեղեցիկ անուշահոտ իւղերը (eau de

Cologne, եւայլն) այս քաղաքին մէջ կը պատ-
րաստուէին: Այս քաղաքի անուշահոտութեանց
գործարաններու արտադրութիւնն էր որ կը
զարդարէր Բարիզի հոտավաճառանոցները:

Ու ես սկսայ մտածել մեր վերնագրի մասին:
Մենք Քրիստոսի անոյշ հոտն ենք: Ի՞նչ գեղեցիկ
պիտի ըլլար գտնել քաղաք մը, որ Քրիստոսի
անուշահոտութիւնովը — հաւատացեալներով —
լեցուած ըլլար: Ի՞նչ իտէալ պիտի ըլլար այդ:
Կ'ըսուի թէ քրիստոնէութեան առաջին դարերուն
և երբեմն երկիրներու մէջ իր առաջին յաղթա-
կան մոտքին, քաղաքներ, գիւղեր գտնուած են
այդ երջանիկ երեւոյթով: Թահիթի կղզին ալ
միսիոնարական առաջին տարիներուն, երբ
բնակները հաւատքին հնազանդեցան, այդ եր-
ջանիկ վիճակին մէջ ապրեցան, սակայն մեղքի
խմորը շուտով ապականեց նաեւ հոն գտնուող
ժողովուրդէն մաս մը: Ուէյլզի արթնութեան
ատեն տեղեկագիրներ կը յիշեն թէ, այն տարի-
ներուն սոյն գաւառին մէջ սրճարան (bar) այլեւս
գոյութիւն չունէր: Բանտերը պարպուած էին,
դատարանները գոցուած, փաստաբանները ի գուր
յաճախորդի կ'սպասէին: Քրիստոսի անոյշ հոտը
ամբողջ Ուէյլզը զբաւած էր, հաւատացեալներ
իրենց կոչումը լրջօրէն ըմբռնած էին: Քրիստոսի
անոյշ հոտը իր գորութեամբը աշխարհի ամէն
կողմը տարածուելու ճամբայ կը գտնէր:

Յայտնի է թէ մենք լուրջ իրողութեան մը
առջեւ կը գտնուինք: Մենք հաւատացեալներս
Քրիստոսի անոյշ հոտն ենք: Զիսքը չենք, այլ

Անոր անոյշ հոտը, ո՛չ թէ վարդը, այլ վարդին հոտը, ո՛չ թէ լոյսը, այլ լոյսին ցոլացումը: Իրմէ առած ըլլալով է որ կուտանք: Պօղոս առաքեալ այս խօսքերը իր անձին համար կ'ըսէ, բայց ասոնք գործածելի են բոլոր Աստուծոյ զաւակներուն համար ալ: Իր Քրիստոսէ առածը Աւետարանն է: Աշխարհ դիտէ թէ Քրիստոսի աւետարանը կայ, անոր առջեւ որքան ալ թումբեր կանգնելու ըլլայ, Քրիստոսի աւետարանը տեղ կը գտնէ: Անուշահոտութեան առջեւ ո՛չ մէկ արգելք կարելի է դնել, այն կը թափանցէ: Քրիստոսի աւետարանը կը թափանցէ դարերէ ի վեր ու պիտի թափանցէ սրտերէ ներս մինչեւ աշխարհի վերջը: Սակայն այս աւետարանը մարդկային ձեռքերով է որ կը մատակարարուի, մարդկային լեզուով և նաեւ հաւատացելոց կեանքով: Այս առումով հաւատացեալը պզտիկ գործնականացած աւետարան մըն է, կարդալ չգիտցողներէ ալ ընթերցելի: Ա՛հ, երանի՛ թէ ամէն հաւատացեալ այսպէս ըլլար:

Այս անուշահոտութիւնը երկու ազդեցութիւն կ'ընէ, մարդիկը երկուքի կը բաժնէ — փրկուածներ և կորսուածներ: Զարմանալի՛ է, սարսուղ-զեցիկ է, ընդզեցուցիչ է, բայց բացարձակ իրականութիւն է: Ա՛յս է ամենօրեայ մեր տեսածը: Մարդիկ կան որ Աւետարանը լսելով կը խոնարհին ու կը հնազանդին հաւատքին, ուրիշներ կը կարծրանան անոր առջեւ, անտարբեր կը դառնան և կամովին զէպի կորուստ կը դիմեն: Պատճառը այս է որ Աւետարանի պատգամը ինքն իր մէջ ստիպողականութիւն մը ունի, ոյժ մը որ կը փորէ, որ մարդուն աչքին մէջ կը նայի, ուղղակի կը խօսի, անոր սրտին թաղուն խորհուրդները կը խառնէ և զանոնք իսկութեամբ երեւան կը բերէ և զայն ընտրելու և որոշելու դիրքին մէջ կը դնէ: Քրիստոս զայս թակղութեան անկիւնաքարն է (*), Քրիստոսի աւետարանը նոյնպէս, նոյնն է նաեւ հաւատացեալը:

Ի՛նչ մեծ պաշտօն, գիտակից ըլլանք այս պաշտօնին. մենք արտօնութիւն ունինք կապելու երկրի վրայ, ի՛նչ որ երկինքը կապուելու է, կրնանք քակել երկրի վրայ ի՛նչ որ երկինքը քակուելու է, Մատթ. ԺԸ. 18:

Սակայն այս բաներուն ո՛վ բաւական է: Եթէ Պօղոս առաքեալինը գիտէր բաւական չիզգար, դուք

ու ես շատ աւելի՛ քիչ: Տէրը կ'ըսէ մեզի. «Զգո՛ւ՛ եղի՛ր քու սպասաւորութեանդ զոր Տէրոջմով առի՛ր, որ զանիկա կատարես»:

Այսպիսի կարեւոր խնդիր մը զմեզ անով ու գողով կը լեցնէ: Անոր մէջ մարդկային հոգիներու յաւիտենական կեանքի ու յաւիտենական կորստեան հարցը կայ: Այն որ կ'ըմբռնէ այս հարցը իր տարածուն սահմանովը, անիկա թեթեւամտութեամբ և ուսը թօթուելով չանցնիր, հապա լուրջ գիտակցութիւն ունի անոր մասին:

Վերջին կէտ մըն ալ, զոր հարկաւոր է ընդգծել, հետեւեալն է. Աստուծոյ առջեւ:

Այս ալ ազդարարական միեւնոյն ատեն մխիթարական բնոյթ ունի:

Ազդարարական, վասնզի գործը մերը չէ, ալ Անորն է: Պատասխանատուութիւն ունինք կատարեալ հաւատարմութեան: Մեր գործատէրը մարդ մը չէ, զոր կրնայինք խաբել, որու կրնայինք կեղծել: Մենք բոլոր էութեամբ Անոր ամենատես աչքերուն առջեւ ենք, որ կը տեսնէ ու կը քննէ մեր միտքը, շարժառիթներն ու տրամադրութիւնները, մեր սիրտն ու երեկամունքը: Անոր աչքերուն եւ գիտութեան առջեւ մեր գործունէութեանն բան մը չվրիպիր: Ուրեմն մեր գործունէութեան վարձատրութիւնը Անկէ պիտի առնենք: Ու Անիկա աշառութիւն չըներ:

Ժիշդ այս խորհուրդը Աստուծոյ զաւակներուն համար խիստ մխիթարական ըլլալու է: Շա՛տ հաւատացեալներ կան, որոնք չեն հասկցուիր, չեն գնահատուիր, թէեւ մարդկային գնահատանքները երբեմն բարբարոս սակայն նորէն ժամանակաւոր են: Աշխարհի մարդիկ, նոյնիսկ եղբայրներ տխուր, յետին շարժառիթներ կը վերագրեն իրենց գործունէութեան, կը քննադատեն, կը վարկաբեկեն, կը պատահի որ կը փախցնեն ալ: Սակայն անոնք մտածելու են թէ մարդոց գնահատութիւնն ու քննադատութիւնը վերջնականը չէ, և իրենք մարդոց համար չեն ըներ որ անոնցմէ արդարօրէն վարձատրուին, հապա կը ծառայեն Անոր՝ որու խոստացած են հաւատարիմ մնալ, համբերող, սեւեռելով իրենց աչքերը Անոր, որ կը տեսնէ և արդարութեամբ պիտի դատէ:

Այս թող ըլլայ իրենց ծառայութեան մէջ տառապանքի աղի արցունքներ կլլող Աստուծոյ զաւակաց մխիթարութիւնը — Աստուծոյ առջեւ:

Պօղոս առաքեալ այսպիսի մէկն էր, քիչ հասկցուեցաւ իր շուրջը եղողներէն: Թէեւ մարդոց խղճին կը յանձնէր ինքզինքը, ինչպէ՞ս

(*) Այս մասին կարգա՛ Բանբերի 1927 տարուան 11րդ թիւի խմբագրականը — Աստուածային գայթակղութիւնը, ուր աւելի լուսաբանութիւն պիտի գտնես:

նաեւ իր անձնական խղճին, բայց իր վերջին ապաստանը գտած էր Աստուծոյ քով: Ինքզինքը Անոր յանձնած էր: Աստուծոյ առջեւ (տե՛ս նաեւ Գլ. Դ. 2):

Եղբայրներ, մենք Պօղոսի հետ Աստուծոյ առջեւ Քրիստոսի անոյշ հոտն ենք փրկուածներու մէջ և կորսուածներու մէջ. ոմանց մահուան հոտ դէպի մահ, և ոմանց կենդանութեան հոտ դէպի կեանք:

Դիտակից ըլլանք մեր պաշտօնին:

Յ. Ն. Ղ.



ԳՈՀՈՒՆԱԿՈՒԹԵԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ

Ես սորվեցայ գոհ ըլլալ իմ գտնուած վիճակիս մէջ.
Փիւ. Դ. 11

Մեծապէս ուրախացայ Տէրջմով, որ իմ վրաս ունեցած հոգեւոր հիմա նորոգութեալ, ինչպէս կը հոգայիք ալ, միայն թէ պոտենցութիւն չունէիք.
Փիւ. Դ. 10

Ինծի կը թուի թէ եթէ Տէյվիտ Լիվինկսթըն Պօղոս Առաքեալին հանգիպած ըլլար, զայն «կատարեալ ազնուական մը» պիտի կոչէր, ինչպէս որ օր մը Յիսուսը այսպէս որակեց: Պօղոս շարունակ ամենափափուկ քաղաքավարութեամբ կը վերաբերի իր ընկեր արարածներուն հետ: Թէպէտեւ երբեք մէկդի չի դնէր իր առնական կորովը, սակայն զիտէ ինչպէս դաշնու է հոգիներու: Փափկութեամբ արտայայտուելու համար թուլամորթ չըլլար բնաւ, իր զօրութեան վրայ կը հազնի փափկութեան վերարկուն: Ի՛նչ շնորհալի կերպով կը յիշէ Փիլիպպեցոց իրեն հանդէպ ցուցուցած հոգածութիւնը: Ի՛նչ ընտիր կերպով կը մտաբերէ անոնց իր պէտքերուն համար մատուցած ծառայութիւնը: Այնչափ վեր կը բռնէ անոնց սիրոյ գործը, որ փառաւորեալ երեւոյթ մը կ'ստանայ: Փիլիպպեցիք մեծապէս կը փառաւորուին իրենց մատուցած ծառայութեան շնորհիւ: Աւետարանի պաշտօնեայի մը ծառայողը բաժանորդ կ'ըլլայ անոր վարձատրութեան: Եթէ Պօղոս մը չեմ կրնար ըլլալ, կրնամ Պօղոսի օգնական մ'ըլլալ: «Տէրը ողորմութիւն տայ Ոնեսիփորոսի տանը, վասնզի շատ անգամ զիս հանգստացուց ու իմ շղթաս ամօթ չսեպեց»:

Թերեւս Ոնեսիփորոս երբեք չէր գիտեր թէ ինչ մեծ գործ կը տեսնէր ու չէր խորհեր թէ աշխարհի ամենէն մեծ Առաքեալին ծառայած հոգին կը կազդուրէր իր երկնցուցած պաղ ջուրով: Պօղոսի նման մեծ Առաքեալ մ'անգամ գաւաթ մը պաղ ջուրի կարօտ էր: Երբեմն կը խորհիմ թէ ամենէն մեծ մարդիկը ամենէն քիչ անգամ մարդոցմէ բարիք կ'ստանան, քանզի կամ չենք համարձակիր անոնց մօտենալ խորհելով թէ մեր ըրածը յանդգնութիւն պիտի թուէր, կամ կը մտածենք թէ մեր փոքր ծառայութիւնները բոլորովին անպէտ են, ու ետ կը կենանք: Սակայն մեծ մարդիկ շատ կը դնահատեն իրենց մատուցուած ամենէն փոքրիկ ծառայութիւնը:

Փիլիպպեցիները այսպէս ծառայած էին Առաքեալին պէտքերուն: Ու քանի որ անիկա շնորհակալութեամբ կ'ընդունի անոնց բարիքը, ետ չի կենար իր զոհունակութիւնը յայտնելու, հակառակ պարագաներու փոփոխութեան: Վեհանձնութեամբ կը պարծենայ թէ ինք անկախ է զինք շրջապատող պարագաներէն, ըլլան անոնք նպաստաւոր կամ աննպաստ: Զի թուատրեր որ իր պարագաները իրեն վրայ տիրեն, այլ կ'ուզէ որ անոնք իրեն ծառայեն: Եթէ կենաց ճամբորդութիւնը զինք Յունիսի արեգակնային օրերու մէջէ կ'անցնէ, շատ լաւ, եթէ Նոյեմբերի աղօտ ու ցուրտ օրերու՝ դարձեալ լաւ: «Ես սորվեցայ գոհ ըլլալ իմ գտնուած վիճակիս մէջ»: Երբեմն կեանքը սահուն չ'ընթանար ու յաղթութեան ոյժ չի մնար: Երբեմն մեր նպատակներուն կը հասնինք ու յաջողութեամբ կը պսակուինք: Երբեմն առատ կ'ունենանք, երբեմն չքաւորութիւն կը քաշենք: Սակայն ամենէն ներհակ պարագաներուն տակ իսկ Առաքեալը անդորր կեանք մը կը վայելէր Յաւիտենական Աստուծոյն թեւերուն տակ: Անիկա նաեւ կ'ըսէ թէ ի՛նչ է ասոր զաղտնիքը: Հաղորդակցութիւն թագաւորաց թագաւորին հետ: Այնպիսի մտերմութիւն մը Անոր հետ, որ զինք կարող կ'ընէ անկարելիութեանց դէմ կենալու և ամենէն դաժան պարագաներու տակ ժպտելու: Դժգոհութեան արտայայտութիւն պիտի չերենայ Առաքեալին դէմքին վրայ, որչափ ժամանակ որ Փառաց թագաւորը կը հաճի իրեն սեղանակից ըլլալ: Պօղոս զոհունակութեամբ կը դիտէ իր կեանքի մով եղանակները ու մանկական հետաքրքրութեամբ կը հսկէ տեսնելու թէ Տէրը ինչպէս պիտի գործածէ զանոնք: Տհաճութիւն չի ցուցներ երբ մով օրերու մօտենալը կը դիտէ, այլ եռանդուն կ'սպասէ որ տեսնէ թէ անոնց տակէն ինչ

պիտի ելլէ: Անցեալ օր սեւ եզերքներով նամակ մը ընդունեցի, որուն մէջէն անհրաժեշտ պէտքի մը համար գործածուելիք չէք մը ելաւ: Պահաւանը սուգի նշան էր, սակայն անոր պարունակութիւնը՝ ուրախութեան միջոց մը: Պօղոս աղէկ մը կը դիտէր մութ եղանակը, քանզի գիտէր թէ անիկա «Քրիստոսի անքննելի ճոխութենէն» բան մը կը պարունակէր:

Ասիկա մեծ դաս մըն է, զոր մեզմէ շատերը խիստ կամաց կը սորվին: Մենք ալ հրեաներուն նման մեր տխուր փորձառութիւնները անսպասու կը նկատենք ու նոյն իսկ կը մտածենք թէ Տէրը մեզի բարկացած ու մեզ իր շնորհքէն զրկած է: Ուրեմն ի՞նչպէս կրնանք խաղաղ ու գոհունակ սիրտ մը ունենալ, երբ երկիրքը կ'ամպոտի ու մթութիւն կը պատէ մեր շուրջը: Մայիսի զուարթ օրերուն գոհունակ ժպիտ մը ունինք, բայց ի՞նչպէս կ'արտայայտուինք երբ աշնան տերեւները կը թափին: Արդեօք կը տրտնջե՞նք երբ ցուրտը կը կոխէ: Մեր բարեպաշտութիւնը եղանակներէ կախում ունի: Գեղեցիկ օդի բարեպաշտութիւն է: Պօղոսի գոհունակութիւնը անսպասու պարագաներու զոհ չերթար: Անոր գոհունակութիւնը անփոփոխ էր, քանզի սորված էր թէ՛ նոյն իսկ մութ ամպին մէջ շնորհալի նպատակ մը կար եւ տխուր փորձառութիւնները Աստուծոյ օրէնքէն դուրս հանդիպող ու մարդոց կեանքերը փճացնող հարուածներ չեն: Ամէն բանի ետեւ բարեբար սիրտ մը կայ ու ամէն ինչ Աստուծոյ սիրալի նպատակէն առաջնորդուած մեզի կը մօտենայ: Այսպէս դիմաւորելու ենք մեր սեւազգեստ հիւրը: Սեւ զգեստներուն ետեւ կը գտնուի մեր երկնաւոր թագաւորին ներկայութիւնը: Փետուրները սեւ են, սակայն անոնց ետեւ կը կենայ Տէրը, որուն «թեւերուն վրայ բռնկուի մեր պիտի ըլլայ»:

Թարգմ. Ն. Մ.

ՆՇՄԱՐՆԵՐ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԵՆՏՔԻ ՀԱՄԱՐ

Մի՛ ջանաք մղել ուրիշները արտաքին կամ ներքին գործերու, որոնց հասունցած չեն անոնք, եւ որոնց Աստուած դեռ կանչած չէ զտնոնք: Առանց Աստուածային մղումի եւ ստիպողականութեան քնաւ չխօսինք մեր մասին, աւելի լաւ է որ ուրիշները զտնեն թէ մենք ո՞վ ենք եւ ի՞նչ ենք: Աստուծոյ թագաւորութեան մէջ:

ԵՐԿՈՒ ՃԱՄԲԱՆԵՐ

ՈՐՈՐԴԱՆՈՒՄ

Ա. Կենաց ճամբան

ՀՐԵԱՅ ՌԱԲԲԻ ՄԸ ԴԱՐՁԸ

Ասկէ մի քանի օր առաջ, Աքսիոն Քրէթիէնի շէնքը կանչուած էինք կարգ մը գործաւորներ, մտիկ ընելու հրեայ Ռաբբիի մը վկայութիւնը, որ Հալէպ եկած էր: Մեծ հետաքրքրութեամբ լսեցինք անոր վկայութիւնը: Ուրիշ օր մը առիթը ունեցայ իրեն հետ առանձին տեսակցելու, Բանքերի ընթերցողներուն համար սոյն յօդուածը պատրաստելու նպատակաւ:

Այս Ռաբբիին անունն է՝ Խել Սլօթովսքի, ծնած Բոլոնիոյ Թօմաշուք քաղաքին մէջ 1898-ին: Անոր ծնողքը թունդ հրեայ ըլլալով, աշխատած էին կանուխ հասակէն դպրոց դրկել եւ կրթել զայն, հրեաներուն օրէնքին համեմատ: Խել փոքր տարիքէն ուսած է Երբայական լեզուն եւ սիրող մը եղած է Թալմուտի, այնպէս որ անոր մեծ մասը կրնար գոց ըսել, երբ հազիւ 17 տարեկան էր: Երկու դպրոցներ աւարտելով վկայականներ առած եւ այս կերպով արժանացած է Ռաբբիի տիտղոսին: Անկէ յետոյ 15 տարի, 1923—1938 կը պաշտօնավարէ իբրեւ Ռաբբի եւ իբրեւ Թալմուտի փրօֆէսոր, Բոլոնիոյ այլ եւ այլ քաղաքներուն մէջ, ինչպէս նաեւ Պաղեստինի, Երուսաղէմ, Թէլ-Ավիվ եւ Հայֆա քաղաքներուն մէջ: Ինք՝ իբրեւ Ռաբբի յետին աստիճան հակառակ էր քրիստոնեաներուն, մանաւանդ հրեայ քրիստոնեաներուն: Իր ազգակիցները կ'զգուշացնէր անոնց հետ յարաբերելէ: «Անոնք մեր ամենէն ռիսերիմ թշնամիներն են» կ'ըսէ եղբոր միշտ եւ չէր թողուր որ մէկը մօտենայ ասոնցմէ որ եւ է մէկուն, նոյն իսկ առուտուր ընելու համար:

«Երբ Բոլոնիոյ մէջ էի» կ'ըսէ ան, «Առաջին անգամ շփման եկայ քրիստոնէութեան հետ, Լէօն Բօզէնպէրկ անուն միսիոնարի մը միջոցաւ, որ Ռուսիայէն, Օտեսա քաղաքէն եկած էր, աւետարանը հրեաներուն քարոզելու նպատակաւ: Մի քանի անգամ տեսակցեցայ անոր հետ, իր փափաքին գոհացում տալու եւ անոր կողմէն լսեցի Քրիստոսի եւ փրկութեան մասին: Միսիոնարին խօսքերը աւելի մտքիս ազդեցին, քան թէ սրտիս եւ առաջին անգամ ըլլալով սկսայ խորհիլ, թէ արդեօք քրիստոնեաներուն պաշտած Քրիստոսը, մեր սպասած եւ մեզի խոստացուած

Մեսիա՞ն է: Իմ ծանօթներս և բարեկամներս նկատելով որ քրիստոնեայ միսիոնարի մը հետ կը յարաբերիմ, կը միանան և առանց ինծի բան մը ըսելու և իմացնելու, նամակ մը կը գրեն Պաղեստին, Ռաբբիներու պետին և տեղեկութիւն կուտան իմ վրայովս: Ռաբբիներու պետը Պաղեստին հրաւիրեց զիս օր մը, որպէսզի հոն գործեմ իբրեւ Ռաբբի: Կինս և չորս զաւակներս հոն ձգելով Պաղեստին եկայ և անմիջապէս պաշտօն առի: Ինծի աւելի սէր և յարգանք ցոյց տուին և ես հետզհետէ բոլորովին մոռցայ այն բաները զորս լսած էի միսիոնարէն:

1937ի վերջերը, օր մը Հայֆայէն Երուսաղէմ կ'երթայի շոգեկառքով: Մի քանի հրեայ բարեկամներ և ծանօթներ ինծի ընկերացած էին: Երբ թրէնի մէջ էինք, իմ առջեւ եղած նստարանին վրայ նստած կը ճամբորդէր մարդ մը: Այս մարդը զրպանէն հանեց փոքր գիրք մը: Ես չէի ճանչնար զինք: Նա սկսաւ կարդալ այդ գիրքը: Ես երբոր նայեցայ գիրքին ետեւէն, տեսայ որ Եբրայերէն գրուած բառեր կան զրքին վրայ: Հասկցայ որ Եբրայերէն Նոր Կտակարան մըն է: Եզրակացուցի թէ մարդը հրեայ մըն է և քանի որ Նոր Կտակարան կը կարդայ, ուստի քրիստոնեայ է: Քովս եղող ծանօթներուս և բարեկամներուս ցուցնելու համար թէ որչափ նախանձաւոր եմ մեր կրօնքին համար, սկսայ սաստիկ յանդիմանել այդ մարդը, Նոր Կտակարանը՝ մոլորածնեւուն գիրքը կարդալուն համար: Անիկա ինծի հարցուց, դուն կարդացե՞ր ես այս գիրքը: Ես ոչ պատասխանեցի: Նա քաղցրութեամբ և ժպտադէմ ըսաւ ինծի, դուն ինչպէ՞ս կրնաս գործածել անանկ լեզու մը, գրքի մը դէմ, զոր բնաւ կարդացած չես:

Շոգեկառքի մէջ բաւական ճամբորդելէ յետոյ, երբ բարեկամներս հեռացան իմ քովէն եւ ես մինակ էի, այս մարդը ըսաւ ինծի, դուն կ'ուզե՞ս այս գիրքը ունենալ եւ կարդալ: Եթէ կ'ուզես, ես կրնամ ուրիշ օրինակ մը գտնել, դուն առասիկա: Անոր առաջարկը սիրով ընդունեցի եւ գիրքը առի:

Նոյն իրիկուն, պանդոկի մը մէկ սենեակին մէջ կը գտնուէի, Երուսաղէմ: Սկսայ կարդալ այդ Նոր Կտակարանը, Մատթէոսի առաջին զլխէն սկսելով: Երբ Յիսուսի լերան քարոզին հասայ և սկսայ կարդալ զայն, շատ զարմացայ: Տեսայ որ բնաւ չնմանիր թալմուտին պարունակութեան: Քրիստոսի խօսքերուն մէջ անանկ վեհութիւն և սրբութիւն կայ որ բնաւ չկրնար բաղդատուիլ թալմուտի և ուրիշ գիրքերու ըսած-

ներուն հետ: Մատթէոսի Աւետարանը կարդացի մինչեւ վերջը և լինցուցի մէկ անգամէն: Յետոյ Մարկոսին անցայ: Այսպէս կը շարունակէի, և սիրտս անհանգիստ էր: Այլ չէի կրնար ըսել թէ Աւետարանը սխալ է: Ուրեմն ի՞նչ պիտի ընէի: Այս գիրքի՞ն պիտի հետեւէի թէ այսքան ճշմարտութիւններուն աչքս գոցելով, նորէն կուրաբար իմ առջի կրօնքիս պիտի հետեւէի: Պայքարը սաստիկ էր սրտիս մէջ: Ժամը առաւօտեան 2.30 եղած էր և ես մինակ էի սենեակին մէջ: Ուզեցի պառկիլ: Անկողին մտայ, սակայն չկրցայ քնանալ: Անկողինէս ելայ և ծունկի վրայ եկայ: Ծնրադիր աղօթել հրէական օրէնքին դէմ է: Տարին մէկ անգամ, այդ ալ քառութեան օրը, երբ ծոմապահութիւն կ'ընէ, հրեայ մը չորս անգամ ծունկի վրայ պիտի գայ և Եբրայերէն լեզուաւ գրուած աղօթք մը պիտի խօսի: Ուրիշ ատեն ներելի չէ ծնրադրելով աղօթել: Հրեայ մը ոչ մէկ ատեն կրնայ սրտաբուղիս աղօթք մ'ընել: Ան պէտք է գրուած աղօթք մ'ըսէ միշտ:

Այդ գիշեր, հրէական օրէնքները զանց ընելով, ծնրադրեցի այսպէս և հոգիս խորերէն աղօթք մ'ըրի: Աղօթքիս իմաստը այս էր. — Խնդրեցի որ Աստուած ինք ինծի հասկցնէ թէ ո՞րն է շիտակը և զիս անոր առաջնորդէ: Աղօթքիս մէջ ըսի՝ ես չեմ գիտեր ով Աստուած, ինչ ընելու եմ: Եթէ Դուն Յիսուսի անունով է որ կը լսես աղօթքի ու կը պատասխանես, հաճէ Անոր անունով լսել ինծի և պատասխանել: Ահա Քեզի կուգամ, Դուն կրնաս լուծել այս դժուարութիւնը: Այս բառերով թափեցի իմ սիրտս:

Որչափ ատեն աղօթեցի, չեմ գիտեր: Երբոր աղօթքս վերջացուցի, անպատմելի խաղաղութիւն և ուրախութիւն մը լեցուցած էր սիրտս: Այնպիսի խաղաղութիւն և ուրախութիւն մը, զոր բնաւ ունեցած չէի 15 տարուայ Ռաբբիութեանս շրջանին մէջ, և ոչ ալ անկէ առաջ: Ատիկա կեանքիս դարձակէտը եղաւ: Ինչ պատահեցաւ ինծի չէի գիտեր: Հիմա կը հասկնամ որ փրկուեցայ այն ատեն: Տէրը փրկեց զիս, իմ մեղքերս ինծի ներելով:

Այս փորձառութենէս յետոյ ելայ, պառկեցայ և հանգիստ քնացայ: Հետեւեալ առտուն նորէն շարունակեցի իմ պաշտօնս, իբրեւ Ռաբբի: Երեք ամիս այսպէս քալեցի, ներքուստ քրիստոնեայ մը, արտաքուստ Ռաբբի մը ըլլալով: Սակայն երեք ամիս յետոյ տեսայ որ իմ այս ընթացքս սխալ է: Ես չէի կրնար երկու Տիրոջ ծառայել: Ուստի հրաժարականս տուի, Ռաբբի պաշտօնս ձգելու համար: Մեծ զարմանք և ծնցում մըն էր

աղգակիցներու՝ այս անակնկալ և տարօրինակ առաջարկս: Շատեր ըսին, ի՞նչ է պատճառը: Եթէ ամսականէդ կամ տեղէդ գոհ չես, պատճառ տես քիմիոսթիւսներ ընել և քեզ գոհացնել: Անոնց ըսի, ով որ կ'ուզէ բուն պատճառը հասկնալ, թող իմ սենեակս գալ այսինչ ժամուն և ես պիտի յայտնեմ: Ոմանք իմ սենեակս եկան և անոնց հասկցուցի թէ ես քրիստոնեայ մ'ընեմ այլեւս և Աւետարանի հետեւող և Յիսուսի հաւատացող: Այս լուրը շանթի պէս իջաւ անոնց վրայ և բարկութեամբ լեցուեցան և շատ աղաչեցին որ ետ կենամ այս բանէն:

Հարուստ հրեայ մը կար, որ բնաւ զաւակ չունէր, ըսաւ ինծի թէ զիս պիտի որդեգրէր և իր բոլոր հարստութեան ժառանգ պիտի ընէր. եթէ ետ դառնայի և հրէական կրօնքիս հետեւէի առաջուան պէս: Իրեն ըսի թէ ես հարստութիւն և դրամ չէի փնտրեր, հապա խաղաղութիւն և ճշմարտութիւն:

Ասոր յաջորդեց հալածում: Հայֆայի մէջ, երբ տունէն դուրս կ'ելլէի, փողոցին մէջ քալելու ատեն, քարերը կ'իյնային վրաս: Ամէն տեղ սկսայ քարկոծուիլ: Քարերու տեղատարափը սաստկացաւ և գլուխս մի քանի տեղէն ճեղքուեցաւ: Ստիպուեցայ բժիշկի դիմել և օրերով պառկիլ անկողնի մէջ:

Քրիստոնեայ միսիոնար մը տեսաւ իմ վիճակս և ինծի թելադրեց, որպէսզի Պաղեստինէն ելլեմ: Ինծի կարդաց սա համարը. «Երբ այս քաղաքին մէջ ձեզ կը հալածեն, ուրիշ քաղաք փախէք»: Մատթ. 10 : 23: Տէրոջ խօսքին եւ միսիոնարին թելադրութեան հնազանդելով Պաղեստինը ձգեցի եւ Պէյրութ եկայ, եւ 14 Մարտ 1938 ին, Պէյրութի Մկրտական եկեղեցիին մէջ մկրտուեցայ Սուրբ Երրորդութեան անունով:

Այս տողերը կարդացողներ չմոռնան աղօթելու ինչ Սլօթովսքի եղբոր համար, որպէսզի աւելի Տէրոջ նուիրուած, քաջ գործաւոր մ'ըլլայ, իր կուրացած խեղճ ազգին:

Մ. Յ. ՊՕԶՕԳԼԵԱՆ

ՆՇՄԱՐՆԵՐ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՀԱՄԱՐ

Վստահութիւնը կը փաթթէ՝ կը բարձրացնէ, վեր կը քաշէ, բարիին քնացող կայծը կը բռնկցնէ:

Անվստահութիւնը վար կը քաշէ,

պզտիկ կայծը կը մարէ:

Բ. Կորնտեան համբան

ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ԷՋ ՄԸ

(ՍԱՏԱՆԱՅԱՊԱՇՏ ԵՋԻՏԻՆԵՐՈՒ ԿԵԱՆՔԷՆ)

«Հունձքը շատ է, բայց մշակները քիչ...»
Մատթ. Թ. 37

Ճէպէլ-Սէնճարի արեւշատ սարալանջերուն, այնքան նկարչագեղ բանականեղիներով, փրուած են շատ մը բրթախօս աւատախումբեր: Ասոնք եզիտի կը կոչուին:

Ծագումով՝ քիւրտ և կրօնքով՝ սատանայա-նալաւ այս ցեղախումբերուն պաշտամունքը այնքան հետաքրքրական է, որքան մթին և թաքուն: Ասոնց հաւատալիքները, ինչպէս նաեւ սովորութիւններն ու բարքերը, զարմանալի խառնուրդ մըն է հին պարսկական, հրէական, մուսամէտական և քրիստոնէական աւանդութիւններուն: Իրենց փիլիսոփայութեան ամենա-յատկանշական գիծը՝ կը կոչանայ Սատանայի (Շէյթան) հանդէպ ունեցած խոր յարգանքին մէջ, որուն ձախաւեր զօրութենէն կը դողան, և զոր կը պաշտեն խիստ վերապահութեամբ:

Մինչ քիւրտ հասարակութիւնը կ'զգեստա-ւորուի ընդհանրապէս ճերմակ (կանայք բազմա-գոյն) հանդերձանքով, եզիտը փաթթուած կը տեսնուի միշտ՝ համակ սեւ, կամ մուր կապոյտ հիւսուածեղէնով: Այս գոյնն ալ բնորոշիչ կէտ մըն է «շուքի երկրպագուներուն» վրայ: Կ'ապրին խմբովին, և կարելի է հանդիպիլ անոնց այնքան Միջագետքի մէջ, որքան Փոքր Ասիոյ և Ծալրա-գոյն Արեւելքի մէջ:

Յետագայ սրտառուչ ողբերգութիւնը, զոր տեղի ունեցած է երկու տարի առաջ Մուսուլի մօտերը, Ջախօ Կազային մէջ, և որուն հերոսը եզիտի շէյխ մըն է, մեզի կը յայտնէ թէ Սատա-նայի իշխանութիւնը ի՞նչ զարհուրելի է, իրեն անձնատուր եղող հոգիներուն վրայ: Առաքեալն ալ Բ. Կորն. 4, 4ով կը հաստատէ թէ՝ — Այս աշխարհի աստուածը անհաւատներուն միտքերը կուրցուց, որպէսզի Քրիստոսի փառաց Աւետա-րանին լոյսը անոնց վրայ չծագէ: «Սա տարբե-րութեամբ սակայն, որ եզիտիները անհաւատ-ներ չեն, ալ համաձայն են. Թ. 2ին, — խաւա-րին մէջ պտրտող և մահուան ստուերին մէջ

քնակող ժողովուրդ մը — որ ճշմարտութեան լոյսին կարօտ են:

Տէրէպէն ցեղէն, Շէյխ Կամօ, իրիկնային իր սովորական աղօթքը և գլխաւոր չորս ծագերը դառնալու արարողութիւնը ճշդիւ կատարելէ վերջ՝ մահիճ կը մտնէ: Չարմանալի երազ մը կը խոովէ զինք: — Փառայեղօրէն լուսասփիւռ անձնաւորութիւն մը, ճերմակ ձիու վրայ նստած և կողքին հրեղէն սուր մը, կը մօտենայ իրեն, երբ ինք իր երկրի կեդրոնական պողոտայէն կ'անցնէր: Անծանօթ ձիաւորին երեսը կը փայլատակի աչքերէն բղխող ակնախտիտ լուսովը: Դէմքը շրջանակուած է ճոխ և սպիտակ մօրուքով: Սա՛ բոլորովին մօտեցած Շէյխ Կամօի, հաստատ ձայնով կ'ըսէ, «Հրաժարիր քալելէ այն ուղիէն, որուն հետեւիլ ուխտած ես, վասնզի այդ խաւարի ճամբան է: Սակայն եթէ շարունակես, շուտով աչքերդ պիտի դադարին լոյսը տեսնելէն»: Այս ըսած՝ խորհրդաւոր պատգամատուն կ'աներեւութանայ, ձգելով Շէյխ Կամօն շփոթ, լուռ և դողահար:

Մի քանի վայրկեան անց՝ խաւարի Իշխանը կը յայտնուի հակառակ կողմէն, շրջապատուած աղօտօրէն շառագոյն բոցով: Ծանշալով իր վեհապետը, ու դեռ սարսուռն լուսազգեստ ձիաւորին հանդիպումէն, ինքզինքէն ելած՝ կ'աղաղակէ, — Սա՛տանայ:

Սարսափած կ'արթննայ Շէյխ Կամօն: Երազը կատարեալ մանրամասնութեամբ կը յիշէ: Հակառակ խաւարի պաշտամունքը ձգելու թաքուն ցանկութեան, ինքզինքը զարնուած կը գտնէ խղճի ծանր տապնապէն, իր Տէրոջ բուն անունը արտասանած ըլլալուն համար: Եզիտը՝ դեւապետին «Շէյթան» անունը արտաբերելէն աւելի զարհուրելի մեղք չի ճանչնար:

Խիստ չարչարուած, չգիտնալով ինչ ընելիքը, Շէյխ Կամօն կը դիմէ եզիտիներու զերագոյն պետին, Շէյխ Սաիտի: Սա՛ որպէս միակ միջոց թողութեան և փրկութեան, կ'առաջարկէ անձնասպան ըլլալ: Սակայն, նախ քան այդ՝ հրապարակաւ խոստովանելու է իր երազը, որպէսզի օրինակ ըլլայ իր հաւատակիցներուն, և արժանի իր նախատուած Տիրոջ գութին: Ապա եթէ չյօժարի անձնասպանութեան, և կամ հետեւի լուսաւոր իշխանի յորդորանքին, ի սպառ զրկուած պիտի ըլլայ ներքին խաղաղութենէ և յաւիտենական երանութենէ, որ խոստացուած է միայն ճշմարիտ եզիտիներուն:

Շէյխ Կամօն, առանց վարանումի կը խոստովանի իր մեղքը համախմբուած ցեղակիցներուն առջեւ: Յետոյ՝ հակառակ իր տան անդամներուն և մտերիմ բարեկամաց պաղատանքին, որոնք կը փորձեն համոզել զայն թէ, անձնասպանութիւնը աւելի աններելի մեղք մըն է քան երազի մէջ Սատանայի անունը արտասանած ըլլալը, կը մտնէ պատերազմիկի մը տունը, և գէնքը կուրծքին, կրակ կը բանայ իր սրտին:

Այսպէս մեռաւ Տէրէպէն ցեղէն Շէյխ Կամօ, ի խնդիր սրտի խաղաղութեան և ի հնազանդութիւն իր կրօնապետին, միայն՝ երազի մէջ նախատած ըլլալուն համար Սատանան:

Հոգեւոր տգիտութեան մէջ կատարուած այս զոհաբերումը, սրտառուչ կոչ մը չէ՞ բոլոր անոնց՝ որոնք աւելի լոյս ու ճշմարտութիւն ունին: Հոգեցունց կանչ մը ուղղուած անոնց՝ որոնք գալու են այս խեղճ ժողովուրդին «աչքերը բանալու, որպէսզի անոնք խաւարէն լոյսի և Սատանայի իշխանութենէն Աստուծոյ դառնան»: Գործ. 26. 17—18,

«Ետքը լսեցի Տէրոջը ձայնը, որ ըսաւ, ո՛վ զրկեմ, և մեղի համար ո՛վ պիտի երթայ» Ես. 6. 8:

(Ճէզիրէ) Տէրիք

ՍԱՄՈՒԷԼ Պ.



Ս. ԳՐԱԿԱՆ
ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

Քաղեց՝
SCOFFIELDԷՆ
Վ. ՍԱՀԱԿԵԱՆ

ԹԱԳԱԽՈՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻՆ ՄԷՋ

Աւետարան ըստ Մատթէոսի ԺԳ գլուխ

Մատթ. ԺԳ գլխու 7 առակները, որ մեր Տէրոջը կողմէ երկինքի Թագաւորութեան խորհուրդները կոչուած են (Հ. 11), միասնաբար առնելով կը նկարագրեն աշխարհի ներկայ տնտեսութեան միջոցին Աւետարանին արդիւնքը. այսինքն սերմնացանութեան ժամանակաշրջանը,

որ սկսաւ մեր Տէրոջ անձնական պաշտօնէութեամբը և կը վերջանայ «Հունձք»ով, Հ. 40—43: Մէկ խօսքով՝ այդ արդիւնքը որոմներու և ցորենի, աղէկ և գէշ ձուկերու խառնուրդն է քրիստոնէական դաւանանքի մթնոլորտին մէջ: Ասիկա «քրիստոնէ»-ութիւնն է:

Այս տեսակէտով հետաքրքրական է սերտել ա. Յորենին միջեւ ցանուած որոմներու առակը, և Բ. Ծովը ձգուած ուռկանի առակը:

ա. Որոմներու առակը.— (Մատթ. ԺԳ 24-30): Այս առակն ալ՝ Սերմնացանի առակին նման մեկնուած է մեր Տէրոջ կողմանէ, Հ. 36—43: Հոս բարի սերմը Աստուծոյ խօսքը չէ, (ինչպէս էր Սերմնացանի առակին մէջ), հապա այդ խօսքին յառաջ բերած, Ա. Պետ. Ա 23, արդիւնքը եղող թագաւորութեան որդիները: Ասոնք Աստուածային կարգադրութեամբ ցանուած, ցրուուած են հոս ու հոն աշխարհի «արտ»ին մէջ, հ. 38: «Աշխարհ»ը հոս թէ աշխարհագրական է և թէ ցեղաբանական. երկիր—աշխարհը և մարդոց—աշխարհը: Աստուծոյ սերմը անմիջապէս սատանային զործունէութեան թատերապայը կը դառնայ: Ուր որ թագաւորութեան որդիները հաւաքուած են, հոն, ցորենին մէջ, հ. 25, 38, 39, Սատանան կը ցանէ «չարին որդիները», որոնք կը դաւանին, կը ձեւացնեն ըլլալ թագաւորութեան որդիներ, և արտաքին երեւոյթներով ու ճամբաներով այնքան կը նմանին թագաւորութեան զմարիտ որդիներուն, որ միայն, վախճանին, հրեշտակներուն կարելի պիտի ըլլալ զանոնք զատել, հ. 28—30, 40—43: Սատանային խաբող զօրութիւնը այնքան մեծ է որ, որոմները յաճախ ինքզինքնին իրապէս թագաւորութեան որդիներ ըլլալ կը կարծեն, Մատթ. Ե 21—23: Շատ մը ուրիշ առակներ և յորդորներ ալ այս խառնուրդի հանգամանքը ի նկատ ունին, Մատթ. ԻԲ 11—14, ԻԵ 1—13, 14—30, Ղուկ. ԺԸ 10—14, Եբր. 2 4—9: Մատթէոսի Աւետարանը ԺԳ գլխէն մինչեւ վախճանը այս տեսակէտը մասնակիօրէն ի յայտ կը բերէ: Յորենի և որոմներու առակը աշխարհի նկարագրութիւնը չէ՝ հապա թագաւորութիւնը դաւանողներուն նկարագրութիւնը: Պարզ անհաւատները բնաւ սատանայի որդիներ չեն կոչուած, հապա միայն կրօնասիրութիւն ցուցադրող անհատները այսպէս կոչուած են, հ. 38, Յովհ. Ը. 38—44, Մատթ. ԻԳ 15:

բ. Ուռկանի առակը.— Մատթ. ԺԳ 47—50: Այս առակն ալ որոմներու առակին նման քրիստոնէական դաւանանքի մթնոլորտը կը ներկա-

յացնէ, բայց սա տարբերութեամբ: Որոմներու առակին մէջ զլիաւոր դերակատարը սատանան ինքն էր, իսկ հոս խառնուրդը աւելի շարժման մը, կազմակերպութեան մը գործն է որ իր ծոցին մէջ կը հաւաքէ այն՝ ինչ որ իրականօրէն իրմէ չէ: Երկինքի թագաւորութիւնը ուռկանի մը նման է, որ մարդկութեան ծովուն մէջ ձգուելով ամէն տեսակէն կը ժողվէ, աղէկներ և անշահներ, արդարներ և չարեր: Եւ ասոնք ամէնը միասին կը մնան ուռկանին մէջ, հ. 49, (և ոչ թէ միայն ծովուն մէջ) մինչեւ այն տնտեսութեան վախճանը: Մեղի ներկայացուածը ոչ թէ ապաշխարած ծով մը չէ՝ հապա նոյնիսկ ապաշխարած ուռկան մըն ալ չէ: Աստուծոյ խօսքը չափազանցօրէն բռնաբարած կ'ըլլան անոնք որ զայն կը մեկնեն ըսելով թէ աշխարհը ներկայ տնտեսութեան մէջ պիտի ապաշխարեցուի: Այդ զապափարը սորվեցնողներ ուղղակի հակառակած կ'ըլլան սերմնացանի, ցորենի, որոմներու և ուռկանի առակներուն մասին նոյնինքն մեր Տէրոջ տուած մեկնութիւններուն:

Այսպէս է ահա թագաւորութեան խորհուրդի ձեւը: Ասիկա այս տնտեսութեան միջոցին քրիստոնէութեան դաւանանքի մթնոլորտն է: Ասիկա խառնուրդ մարմին մըն է ճշմարիտի և կեղծի, ցորենի և որոմներու, աղէկներու և անշահներու: Ասիկա արատաւորուած է ծիսապաշտութեամբ, կասկածով և աշխարհասիրութեամբ: Բայց անոր մէջ Քրիստոս կը տեսնէ ճշմարիտ թագաւորութեան ճշմարիտ որդիները, որոնք, վախճանին, «արեւի պէս պիտի փայլին»: Մեծ արտին, աշխարհի մէջ, Քրիստոս կը տեսնէ բոլոր դարերու փրկեալները, բայց մասնաւորապէս իր պահուած Իսրայէլը, որ դեռ պիտի վերահաստատուի և օրհնուի: Այսպէս նաև թագաւորութեան այժմու ձեւին մէջ, (որ գալիք ճշմարիտին այնքան աննման է թէև) նա կը տեսնէ եկեղեցին, Իր մարմինը և հարսը, և ուրախութենէն նա (Քրիստոս) իր բոլոր ունեցածը կը ծախէ և կը դնէ այն արտը, գանձը և մարգարիտը. Մատթ. ԺԳ 44, 45, 46, Բ. Կոր. Ը 9:

Յիսուսի նայէ միայն՝ այսօր

Անոր վստահէ միայն՝ այսօր

Անոր սպասէ միայն՝ այսօր

Իր կամքը կատարէ միայն՝ այսօր:



ՇՈՂԵՐ ԵՒ ՇԱՂԵՐ

ԿԵՆԱՑ

ԱՇՈՒՆԵՐԷՆ

ՈՍՏԻԿԱՆ ՄԸ ԻՆՉՊԷՍ ԴԱՐՁԻ ԵԿԱԻ

Մուտիի(*) և Սանքիի Լոնտոնի մէջ Աւետարանչութեան գտնուած միջոցին, երիտասարդ մը որ անոնց ժողովներէն մէկուն մէջ օրհնութիւն ստացած էր, որոշեց զայն ուրիշի մըն ալ հաղորդել: Այդ գիշեր ուշ ատեն երբ տուն կը վերադառնար, միակ անձը զոր ինք տեսաւ ոստիկան մըն էր, որ հանդարտ փողոցի մը մէջ վեր վար կ'երթեւեկէր: Հաւատալով թէ Աստուած անոր սիրտը պիտի բախէր այդ երեկոյ, անոր ետեւէն վազելով ըսաւ. «Բարեկամ, մեծ խնդրանք մը ունիմ ձեզմէ: Կ'ուզեմ որ մինչ հոս կ'երթեւեկէք, քառորդ ժամ մը սա համարին վրայ մտածէք: «Վասնզի Աստուած այնպէս սիրեց աշխարհը, մինչեւ իր միածին Որդին տուաւ, որպէս զի ամէն ով որ Անոր հաւատայ՝ չկորսուի, հապա՝ յաւիտենական կեանք ունենայ»: Ոստիկանը նախ մերժեց, բայց վերջապէս երիտասարդին անկեղծութենէն շարժելով, անոր հաճոյք պատճառելու համար ըսաւ. «Լաւ, կրնամ անոր վրայ խորհիլ ինչպէս պիտի խորհէի ուրիշ բանի մը վրայ»: Նա այսպէս ըրաւ. «Եւ մինչ կը խորհէր, կորսուած աշխարհի մը հանդէպ Քրիստոսի միջոցաւ Աստուծոյ սիրոյն խորհուրդը անոր սրտին մէջ այնպէս մը տեղ գտաւ, Սուրբ Հոգիին զօրութիւնովը, որ նա անհանգիստ եղաւ իր վիճակին մասին և համոզուելով Աստուծոյ սիրոյն, Քրիստոսը ընդունեց իբր իր անձնական Փրկիչը:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՍԷՐ

Անգլիական դպրոցի մը մէջ ութը հրեայ աշակերտներ կային: Անոնց կեանքը թշուառ եղած էր այն հալածանքին պատճառաւ որուն ենթարկուած էին: Դպրոցի ընկերներէն «շինիզ» և «իբիզ» կոչուելով կ'զգային թէ առհասարակ

(*) Մուտիի կենսագրութիւնը եթէ կ'ուզես, կրնաս Բանրերի խմբագրութենէն հատ մը տպագրել:

անբաղձալի են: Սնապարծ աշակերտները փողոցներու մէջ իսկ կը քարկոծէին զանոնք: Օր մը, երբ նորէն կը քարկոծուէին, տիկին մը տղոց և զանոնք չարչարողներուն մէջտեղը վազելով պոռաց. «Կեցէ՛ք, առաջ ինծի պիտի զարնէք»: Յաջորդ քարը անոր ծնօտին զարնուեցաւ ու յարձակողները վախի մատնուած փախան: Տիկինը շփոթած՝ հրեայ տղաքը իրեն կանչելով ըսաւ. «Ես այսօր ձեր ախոյեանը եղայ և պաշտպանեցի զձեզ, վասնզի իմ ամենալաւ բարեկամս հրեայ մըն է: Ձեզի սորվեցուցած են հեգնել ու նախատել զԱյն, սակայն Նա ձեզ կը սիրէ, Անոր անունը Յիսուս է»:

Անոնք վերջը Փրկիչը գտան և անոնցմէ վեցը հիմա Աստուծոյ ծառայութեան մէջ են: Անոնց սրտերուն մէջ Քրիստոսի հանդէպ առաջին սերմը այս տիկինին համակրութեամբն ու զործնական սիրովը սերմանուած էր:

ՍԻՐԵՑԷ՛Ք ՁԵՐ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ

Բանտարկեալ մը իր խուցին մէջ Սուրբ Գիրք կը կարդար. մատուակը անոր հարցուց, «Ի՞նչ կը կարդաս»: Նա պատասխանեց, «Լեււան վրայի քարոզը, պարոն»: «Մինչեւ ո՞ւր հասար»: «Այն համարին ուր մեզի կ'ըսուի թէ մեր թշնամիները սիրելու ենք»: Այն ատեն մատուակը առիթը զործածելով Տէրոջը վարդապետութեան գեղեցկութեանը վրայ քանի մը բառեր խօսեցաւ: Բանտարկեալը ըսաւ, «Բայց պարոն, ճիշդ այդ սէրն է որ զիս այս տեղ բերաւ»: Մատուակը զարմանքով անոր նայեցաւ ու հարցուց, «Բայց այդ ինչպէ՞ս կրնայ ըլլալ»: «Քանզի իմ թշնամի» պիտան է, այդ իմ ամենամեծ թշնամիս է ու ես զայն բոլոր սրտովս կը սիրեմ»: Այն ատեն մատուակը պատասխանեց, «Այո՛, ձեր մարդ, սակայն Սուրբ Գիրքը կ'ըսէ, «Ձեր թշնամիները սիրեցէք», ոչ թէ զանոնք կ'լլեցէք»:

ԻՆՉՊԷՍ ՁՈՒԿ ՈՐՍԱԼՈՒ Է

Չկնորս մը ձուկ որսալու ամենալաւ գործիքներով կէս օրէ մը ետքը բաւական ժամանակ վատնեց կարմրախայտ որսալու գետակի մը քով, ու բան մը չի ընեց: Երբ ճամբան վերադարձաւ իր կառքը՝ առնելու, զիւղացի մանչու մը հանդիպեցաւ որ առկէ՞լ անցնէր, գաւազանի

տեղ ծուռ ու մուռ ճիւղակ մը և ծայրը կարթի տեղ ծուռ գնդասեղ մը, բայց եւ այնպէս ունենալով իր կողովին մէջ քանի մը ձուկեր: Նա զարմանքով տղուն հարցուց թէ ինչո՞ւ ինք ձախողած և նա յաջողած էր: Տղան սապէս պատասխանեց. «Հոն՝ ուր դուք կ'որսայիք, շուրթին վրայ ձեր շուքը կ'իյնար և ձուկերը անկէ վախնալով կը փախչէին. բայց հո՞ն՝ ուր ես կ'որսայի, պահուած էի մացառներուն ետեւը: Մարդը ձուկ չկրցաւ բռնել, քանզի անոնք իր շուքը տեսած էին:

Մենք երբէք մարդու լաւ որսորդներ պիտի չըլլանք, եթէ մարդիկ շարունակ մեր շուքը տեսնեն, մենք Բրիստոսի ետեւը պահուած ելուք:



ՈՂ, ԹԵՒԵՐԻ ՏԱՐԱԾԷ

1796ին Ֆրանքո—Գերման պատերազմի ընթացքին ֆրանսական զունդերը Գերմանիոյ Լիպպէրի գիւղն էին: Գիւղացիի մը յիմարական մէկ վարմունքէն զրգոտած՝ զինուորները սկսան զգիւղին բնակիչները սպաննել: Կիներուն զրեթէ ամէնը մօտակայ անտառը փախած էին: Միայն մայր մը իր ծանրապէս հիւանդ պղտիկին քով մնացած էր: Վիրաւորներուն և մեռնելու վրայ եղողներուն հառաչանքները անոր ականջներուն հետզհետէ աւելի լսելի կ'ըլլային: Նա սենեակին դուռը կղպեց և անշուշտ մնաց: Քիչ յետոյ ֆրանսացի զինուոր մը իր հրացանի հարուածով դուռը կոտրեց և ներս մտաւ: Խեղճ մայրը գիտէր թէ հոս Աստուծոյ է զատ մէկը չէր կրնար օգնել: Ներքին ձայնի մը հնազանդելով իր ձեռքերը սիւրբի հիւանդին վրայ դնելով սկսաւ բարձր ձայնով աղօթել,

Ո՛հ, տարածէ թեւերդ,
Ով Յիսուս ցնծութիւնս,
Թեւոցդ տակ առ ձագերդ,
Սատան կլլել ուզէ գիս,
Հրեշտակներդ երգեն թող
«Մանկան չ'ազդէ միտս և դող»:

Ֆրանսացի զինուորը երբ գայտ լսեց, իր հրացանը վար առաւ և պղտիկին մօրը ձեռքը թոթովելով լուռութեամբ դուրս ելաւ ու դրան առջեւ պահակ կեցաւ, որպէսզի իր ընկերներէն մէկը ներս մտնելով միտս մը չտայ անոնց:

Հաւաքեց՝ Ժ. Կ. Պ.

ՃԵՅՄՍ

ՀԸՏՈՐՆ

ԹԵՅԼԸՐ



Ձ Մ Ե Ռ Ը

ՏՐԷՅՆՍԱՅՏԻ ՄԷՋ



Հրտարն թէյլերի Լոնտոնի մէջ անցուցած օրերուն պատմութիւնը կատարեալ պիտի չըլլար եթէ չիշէինք քանի մը միջադէպներ որոնք զարձեալ հաստատեցին թէ «կարելի էր միայն աղօթքի միջոցով մարդիկ շարժման բերել Աստուծոյ ձեռքով»: Հրտարնի նախկին բնակարանին տիկինը, Միսիս Ֆինչ, իր դրամը կ'ստանար նաւային ընկերութենէ մը՝ որ Լոնտոնի մէջ կը գտնուէր: Այն անձը որ ստանձնած էր իր ամուսինէն եկած դրամը իրեն զրկելու՝ ձրի չէր մատուցաներ այս ծառայութիւնը: Հրտարն Լոնտոն գալէ վերջ սկսաւ այս ծառայութիւնը ձրի կատարել Միսիս Ֆինչի օգնելու համար: Միսիս Ֆինչ օր մը մեծ նեղութեան մէջ ըլլալով՝ Հրտարնի գրեց թէ արդեօք չէ՞ր կրնար կարելի եղածին չափ շուտ խրկել իրեն ամսականը, քանի որ տան վարձք ու քանի մը ուրիշ անհրաժեշտ պարտքեր ունէր վճարելիք: Հրտարն ճիշդ այդ օրերուն քննութեան մէջ էր ու ծանր կ'աշխատէր լաւ քննութիւն մը տալու, քանզի առաջնակարգ աշակերտներ դպրոցին ծախքովը կը դաստիարակուէին ու ինք պէտք ունէր ասանկ օգնութեան մը: Ուստի Միսիս Ֆինչի համար նաւային ընկերութեան երթալու երբէք ժամանակ չունենալով խորհեցաւ իր ունեցած դրամը զրկել ու քննութենէն վերջ Միսիս Ֆինչի ամուսինէն եկած դրամը գանձելով՝ իրեն փոխ տուած դրամը ետ առնել:

Երբ Հրտարն նաւային ընկերութեան ներկայացաւ Միսիս Ֆինչի ամսականը ստանալու, այդ գործին նախող զրազիրը իրեն իմացուց թէ Մր. Ֆինչ իր գործած նաւուն վրայէն փախչելով տեղ մը ոսկիի հանքերու մէջ աշխատելու գացած էր: Ուրեմն անոր կնոջ տրուելիք դրամ չկար:

«Խիստ դժուարին խնդիր մ'ըն է այս ինծի համար, քանզի ես արդէն անոր տիկնոջ վճարած եմ ու գիտեմ թէ անիկա բոլորովին անկարող է իր պարտքը վճարելու» ըսաւ Հրտարն:

«Շատ կը ցաւիմ, բայց ես միայն ինծի հրամայուածին համաձայն կրնամ շարժիլ անշուշտ», պատասխանեց զրազիրը:

Հըտսըն քիչ մը շփոթեցաւ, սակայն քիչ վերջը խորհեցաւ թէ ասիկա Աստուծոյ վատահելու նոր պատեհութիւն մըն էր:

Քանի մը օր վերջը, երբ ան թուղթի թերթեր իրարու կը կարէր իր դասերը գրելու համար՝ ասեղը յանկարծ մատը մտաւ: Յաւը այնքան չնչին էր որ քանի մը վայրկեանէն մոռցաւ: Յաջորդ օր անդամահատութեան մը մասնակցելու էր: Մեռեալը՝ որուն վրայ քննութիւններ պիտի կատարէին՝ սոսկալի տենդէ մը մեռած էր, որ սովորականէն աւելի վտանգաւոր էր: Բոլոր անոնք որ անդամահատութեան կը մասնակցէին, մասնաւոր զգուշութեամբ մը կը կտրէին անոր մասերը, քանզի գիտէին թէ եթէ ինքզինքնին սկրթելու աստիճան իսկ վիրաւորէին, կրնային մեռնիլ: Դեռ կէս օր չի հասած՝ Հըտսըն սկսաւ անգօր զգալ ու երբ հիւանդանոցի վիրաբուժական բաժինին մէջէն կ'անցնէր, մէկէն ի մէկ այնքան գէշ զգաց որ անմիջապէս դուրս ելլելու ստիպուեցաւ: Կէս օրէն վերջի դասաւանդութեան ժամուն այնքան հիւանդ էր, որ չէր կրնար նօթագրութիւններ ընել: Իր աջ բազուկը և ամբողջ աջ կողմը սաստիկ կը ցաւէին: Չի կրնալով իր գործը շարունակել, անդամահատութեան սենեակը գնաց, որպէսզի իր գործիքները հոն դնէ: Անդամահատութեան վրայ հսկող վիրաբույժը հոն էր: «Ձեմ գիտեր, ինչ է պատահած ինծի», ըսաւ անոր:

«Յայտնի է թէ ինչ է պատահած», պատասխանեց վիրաբույժը: «Անդամահատութեան միջոցին ինքզինքդ կտրեր ես: Այս մահը գէշ տենդի մը արդիւնքն էր»: Բայց երբ վիրաբույժը անոր ձեռքն ու բազուկը քննեց, բան մը չգտաւ որ կրնար ցաւի պատճառ ըլլալ: Յանկարծ մտաբերելով թէ նախորդ օրը ասեղ մտած էր իր մատը, հարցուց թէ արդեօք ասեղին պատճառած ծակը տակաւին դոց կրնա՞ր ըլլալ:

«Թերեւս այդ է ցաւիդ պատճառը: Անմիջապէս տուն գնա ու գործերդ կարելի եղածին չափ շուտ կարգադրէ, քանզի մահը անխուսափելի է քեզի համար», պատասխանեց վիրաբույժը:

Քանի որ վիրաբույժը անհաւատ մըն էր, Հըտսըն ուրախ եղաւ որ պատեհութիւն կը ներկայանար անոր ըսելու թէ ինք որքան ուրախ էր մօտ ժամանակէն իր վեհապետին հետ միանալու յոյսով: Ուստի դառնալով անոր ըսաւ, «Ես չեմ խորհիր թէ պիտի մեռնիմ, որովհետեւ որչափ որ հասկցած եմ, Չինաստանի մէջ գործ կայ ինծի: Եթէ այս ճշմարիտ է, որչափ ալ որ ծանր է տաղնապը, պէտք է անկէ ազատիմ»:

«Շատ լաւ է քու դադափարդ», պատասխանեց վիրաբույժը, «սակայն անմիջապէս կառք մը վարձէ ու կարելի եղածին չափ շուտով տուն հասիր, քանզի կորսնցնելու ժամանակ չունիս: Քիչ վերջը անկարող պիտի ըլլաս քու գործերդ կարգադրելու»:

Երբ իր բնակարանն հասաւ, տան սպասաւորէն տաք ջուր խնդրեց, ու քանի որ իր ձեռքը տաք ջուրին մէջ դրած էր, սպասաւորին խօսեցաւ զայն յորդորելով որ Աստուծմէ յաւիտեանական կեանք ընդունի Յիսուս Քրիստոսի ձեռքով: Ու թունաւորուած արիւնը դուրս հանելու համար իր մատը ծակովէն վերջ՝ խեղճ, տառապեալ Հըտսըն նուաղեցաւ: Երբ ինքն իրեն եկաւ, ինքզինք իր մահիճին մէջ գտաւ: Իր հօրեղբօր անձնական բժիշկը՝ որ իրեն կը նայէր, ըսաւ, «Եթէ մինչեւ հիմա չափաւոր կեանք մը ապրած ես, թերեւս աղէկնաս, սակայն եթէ երբէք ոգելից ըմպելիներ գործածած ես, ոեւէ յոյս չկայ քեզի համար»: Արդ՝ Հըտսըն յաճախ հացով ու ջուրով միայն ապրած էր, ուրեմն ժուժկալ կեանքի մը առանձնաշնորհումները իր կողմն էին:

Կամաց կամաց անցան անոր վշտի օրերը, բայց երբ ապաքինելով սենեակէն դուրս ելաւ, իմացաւ թէ ուրիշ երկու երիտասարդներ՝ որ իրեն հետ այն անդամահատութեան մասնակցած էին, վիրաւորուելով մեռած էին: Աստուած իր կեանքը պահած էր, որպէսզի Չինաստանի մէջ գործէր: Բժիշկը իրեն խորհուրդ տուաւ որ քիչ մըն ալ գօրանալուն պէս՝ քաղաքէն դուրս երթար: Հըտսըն դրամ չունէր ապաքինման համար քաղաքէն դուրս՝ բացօթեայ տեղ մը երթալու: Ուստի խնդիրը Աստուծոյ յանձնեց աղօթքով: Իր ֆիզիքականին մասին բնաւ լուր չտուաւ Հըլլի ու Պարհալիի մէջ գտնուող իր բարեկամներուն:

Օր մը երբ գրեթէ ուժասպառ բազմոցին վրայ պառկած էր, Տէրը անոր միտքը ձգեց որ անգամ մըն ալ նաւային ընկերութեան երթալով Միսիս Յինչի ամսականին մասին հարցնէր: Հանրակառքի տալու չափ դրամ չունէր, նաեւ կը կասկածէր թէ պիտի կրնար որ եւէ դրամ ձեռք ձգել, ուստի կը վախնար թէ այդ խորհուրդը աւելի «յարդի մը կառչիլ» էր քան Աստուծոյ առաջնորդութիւնը: Սակայն աղօթեց այդ նկատմամբ ու յստակօրէն զգաց թէ Աստուծոյ առաջնորդութիւնն էր: Թէպէտեւ առանց օգնութեան աստիճաններէն ելլելու և իջնելու չափ ոյժ չունէր, սակայն այնքան հաւատք ունէր Աստուծոյ վրայ որ բոլորովին մինակ՝ երկու մղոն

տեղ քալելու համար ճամբայ ելաւ: Իրեն պէտք եղած զօրութիւնը խնդրեց Անկէ որ իրեն թելադրած էր այս քայլն առնել: Վերջապէս ապահով հասաւ նաւային ընկերութեան զրազրին քով, որը բացազանչեց՝ «որչափ ուրախ եմ որ եկար: Ստուգուեցաւ թէ փախչողը Ֆինչ անունով տարբեր մարդ մըն էր: Ուստի մինչեւ այսօր վճարուելիք դրամին կէսը կրնամ տալ քեզի ամենայն ուրախութեամբ»:

Յաջորդ օրը Հըտսըն թէյլըր լաւ կ'զգար: Ուստի գնաց իրեն հոգ տանող բժիշկը տեսնելու: Թէպէտեւ իր հօրեղբայրը ստանձնած էր բժիշկին ծախքը վճարել, սակայն քանի որ ինք հիմա դրամ ունէր, կը խորհէր թէ աւելի շիտակ էր որ ինք վճարէր: Բայց քանի որ ինք բժշկութիւն կ'ուսանէր, բարի բժիշկը միայն դեղի դրամն առաւ իրմէ: Հըտսըն դեղերուն համար վճարելէն վերջ տեսաւ թէ ճիշդ այնչափ դրամ մնացած էր իր քով՝ որչափ որ պէտք էր քաղաքէ դուրս երթալու, ինչպէս որ բժիշկը իրեն պատուիրած էր: Որոշեց իր ծնողաց երթալ: Այս խնդիրը Աստուծոյ իրեն համար կատարած մէկ մեծ գործը նկատելով՝ ներքին մղում մը զգաց խօսելու իր բժիշկին, որ անհաւատ մըն էր:

«Կ'զգամ թէ Աստուծմէ վերջ քու խնամքիդ կը պարտիմ իմ կեանքս, ու իմ ջերմ փափաքս է որ դուն ալ իմ անգին հաւատքիս մասնակից ըլլաս» ըսաւ անոր: Հըտսըն թէյլըր այս խօսակցութեան նկատմամբ պատմելով կ'ըսէ՝ «Անոր ըսի թէ ինչու համար Լոնտոն կը գտնուէի, ինչ էին իմ պարագաներս ու ինչու ո՛չ միսիոնարական ընկերութիւնէն ո՛չ ալ իմ հօրմէն օգնութիւն առնել ուզած էի: Նկարագրեցի թէ ինչ յուսահատական վիճակի մէջ էի նախորդ օրը, երբ ինծի պատուիրած էր օգափոխութեան երթալ: Ու երբ ըսի թէ մինչեւ նաւային ընկերութեան զրառնեակը քալած էի, ապշած ինծի նայելով բացազանչեց՝ «Անկարելի է այդ քովէդ մեկնելու միջոցին աւելի ոգիի՝ քան մարդու կերպարանք ունէիր»: Կրկին ու կրկին ստիպուեցայ դայն վստահացնել թէ հաւատքով զօրացած՝ իրապէս քալած էի այդ հեռաւորութիւնը: Պատմեցի թէ ինչ վճարումներ ընելու էի և ցուցուցի թէ ճիշդ Պարնսալի հասնելու չափ դրամ մնացած էր քովս: Բարի բարեկամս բոլորովին յուզուած և արտասուտտ աչքերով պատասխանեց՝ «Քու հաւատքիդ նման հաւատք մը ունենալու համար՝ ամբողջ աշխարհը տալու պատրաստ եմ: Ես ալ ուրախութեամբ ըսի իրեն թէ առանց դրամի ու առանց գնոյ կրնար ունենալ»:

ՆՈՐ ՃԱՄԲԱՆԵՐ

1,855ի ձմեռը, երբ Հըտսըն բոլորովին առողջացած կրկին Լոնտոն վերադարձաւ հիւանդութենէ մը որ գրեթէ մահ պիտի պատճառէր իրեն, սկսաւ խորհիլ՝ «Արդեօք բժշկական ընթացք» շարունակե՞մ: Զինական Աւետարանչական Ընկերութեան հանդէպ իմ պարտականութիւնս պիտի չաւելցընէ՞ այս: Եթէ շարունակեմ, 400 ոսկի պիտի ծախսեն ինծի համար ու ես պարտաւորուած պիտի զգամ կամ իրենց ընկերութեան մէջ գործելու կամ թէ ուսմանս դրամը վերադարձնելու»:

Դարձեալ մտածեց՝ «Այս ընկերութիւնը միմիայն ծովեզերեայ քաղաքներու մէջ միսիոնարութիւն կ'ընէ, մինչդեռ ես շարունակ կ'զգամ թէ Զինաստանի խորերը երթալու եմ, ուր շատ քիչ սպիտակամորթ մարդիկ կ'երթան: Եթէ թողում որ իմ դաստիարակութեանս ծախքը վճարեն և զիս զրկեն, ապրուստի երբէք նեղութիւն պիտի չունենամ Զինաստանի մէջ: Սակայն եթէ երբէք Աստուծմէ յստակօրէն առաջնորդուած զգամ՝ ներքին գաւառներուն մէջ գործելու, բայց ընկերութիւնը ուզէ որ ծովեզերքը մնամ, ի՞նչ պիտի ընեմ»:

Ասոր նման լուրջ խորհուրդներով զբաղած էր ապագայ միսիոնարը: Պէտք էր որ շուտով որոշման մը գար: Ժամանակին լուր տալու էր ընկերութեան, որպէսզի գարնան շրջանին համար արձանագրուէր իրրեւ ուսանող սակայն մինչեւ որ Աստուծոյ առաջնորդութեան վստահ չըլլար, չէր կրնար որ եւ է քայլ առնել:

Հիւանդանոցէն իր բնակարանը ու բնակարանէն հիւանդանոց քալած միջոցին շարունակ կ'աղօթէր որ Տէրը Իր կամքը իրեն յայտնէր: Ու երբ հասկցաւ Անոր կամքը, առանց յապաղման Անոր հետեւեցաւ:

Քանի որ Հըտսըն ամէն բանէ աւելի ինքզինքը պարտաւորուած կ'զգար իր՝ Աստուծոյ կամքին նկատմամբ ունեցած համոզմանց հետեւելու, վերջապէս զրեց Մր. Պըրտի, Զինական Աւետարանչական ընկերութեան քարտուղարներէն մէկին: Անոր յայտնեց թէ ինչ պատճառներով ստիպուած էր ընկերութեան օգնութիւնը մերժել: Իր դիրքը բացատրելով ըսաւ՝ «Եթէ Աստուծմէ առաջնորդուած երթամ, Անիկա պիտի բանայ իմ ճամբան ու պէտք եղած միջոցները պիտի հայթայթէ: Եթէ շրջանաւարտութիւնս անհրաժեշտ է, անոր համար ալ պէտք եղած

միջոցը պիտի տայ: Եթէ բժշկական ընթացքիս աւարտումը անհրաժեշտ չէ, աւելի լաւ է որ անոր հարկադրած ժամանակն ու դրամը տարբեր կերպով գործածուին: Ու եթէ Տէրը զիս կանչած չէ Զինաստան երթալու, թէ ինծի և թէ ուրիշներու համար աւելի լաւ է որ Անգլիայէն դուրս չելլեմ:

Վերջապէս Զինաստանի ներքին գաւառներէն լուրեր հասան Անգլիա՝ որ Արեւմտեան աշխարհին մեծ զարմանք պատճառեցին: Թայփինկի ապստամբութիւնը, որ 1850ին Զինաստանի հարաւային կողմը սկսելով ամէն կողմ տարածուած էր, հասած էր նաեւ կեդրոնական գաւառները ու Շանկցէի դաշտին մեծ մասին տիրացած, ուր կը գտնուէր նաեւ Զինաստանի նախկին մայրաքաղաքը՝ Նանքին: Ապստամբութեան առաջնորդը Նանքին իրեն մայրաքաղաք ընելով համախմբած էր իր բանակը Փէքինի վրայ արշաւելու: Զարմանալի է որ այսպիսի ճգնաժամ մը հեթանոս երկրի մը մէջ՝ քրիստոնէական յատկագրի մը վրայ հիմնուած էր: Ապստամբութեան առաջնորդը՝ Հընկ Սիւթսուէն՝ Ս. Գիրքի հիման վրայ կը կենար, սակայն որքան քիչ կը հասկնար անոր հոգեւոր վարդապետութիւնները:

Բապըթ Մարիսընի միջոցով դարձի եկած մարդ մը թերթիկ մը տուած էր իրեն՝ զոր կարդալէն վերջ քանի մը ամիս Սուրբ Գիրքի ուսումնասիրութեամբ անցուցած էր Ամերիկեան Միտչանի Միսիոնարական Ընկերութեան մէջ: Իր բնագաւառը, Քվանկսի վերադառնալէ վերջ՝ սկսած էր ուրիշներու ալ սորվեցնել իր նոր կրօնքը: Արգիլեց աֆիոնի գործածութիւնը ու Արեւելեան ժողովուրդներու հիւրասիրութիւն ցոյց տուաւ: Ասիկա բոլորովին հակառակ էր Զինական պարտութեան ու աւելորդապաշտութեան: Կառավարութիւնը սկսաւ սաստիկօրէն հալածել զինք: Ասոր վրայ իր հետեւորդները գէնք վերցնելով պատերազմելու սկսան: Զանազին կռապաշտութիւնը բնաջինջ ընել ու որչափ որ կրնային քրիստոնէութեան մասին տեղեկութիւն տալ ժողովուրդին: Սակայն գրեթէ ոչ մէկը կրցաւ ճշմարիտ գաղափար մը կազմել քրիստոնէութեան նկատմամբ: Ապստամբութիւնը յառաջ երթալով ժողովուրդը տեղի տուաւ յաղթական բանակին:

Զինաստանի մէջ միսիոնարական գործ ընելու սքանչելի կարելիութիւններ յառաջ եկան: Արեւմտեան երկիրներու քրիստոնեաները նոր յոյսով ոգեւորուեցան: Ուրեմն զարմանք էր որ

երբ Հըտսըն այս լուրերն առաւ, իր բժշկական ընթացքը կէս թողուլ և Զինաստան երթալ ուզեց: Ասոր նպատակն էր նաեւն վրայ գործելով իր ճամբուն ծախքը հանել: Սակայն հակառակ իր ոգեւորման՝ զգաց թէ ըստ Քրիստոսի վարդապետութեան՝ շինելու ձեռնարկելէ առաջ մանրակրկիտ հաշիւ տեսնելու էր: Առանց դրամի Զինաստան հասնելէ վերջ՝ ինչպէ՞ս միսիոնարական գործի պիտի սկսէր:

Հըտսըն մտածեց՝ «Երեք ու կէս տարի առաջ Աստուած ինծի ըսաւ որ Իրեն համար Զինաստան երթամ: Ասոր դռները քրիստոնէութեան համար բացուած կ'երեւնան, արդեօք ամէն կերպով նախապատրաստուած եմ Աստուծոյ կողմէն: Բժշկական շրջանս տակաւին աւարտած չըլլա՞լս է միակ արգելքը:

Զինաստանի մէջ յառաջ եկածը նկատելով Զինական Աւետարանչական Ընկերութիւնը սկսաւ քիչ մը տարբեր կերպով խորհիլ իր պարտականութեանց մասին: Շարաթ կէսօրէ մը վերջն էր: Քարտուղարը իր դրասենեակը նստած կը գրէր: Նամակը տակաւին իր դրասենեակին վրայ էր, Մէյ մըն ալ դրասենեակին դուռը՝ զարնուեցաւ:

«Հրամայե՛ք» եղաւ պատասխանը: Դուռը կամացուկ մը բացուելով այցելուն ներս մտաւ:

«Ճիշդ հիմա քեզի կը գրէի, նամակը հոս է տակաւին», բացագանչեց քարտուղարը: Ասոր վրայ երկար ու լուրջ և ծանրակշիռ խօսակցութիւն մը սկսաւ յիշեալ նամակին պարունակութեան վրայ: Նամակ մը որ երբէք չի խրկուեցաւ և որուն պարունակութիւնը հետեւեալն էր.

17, Րէտ Լայըն Սքուէր
Լոնտոն

4 Յունիս 1853

Սիրելի Տէր,

Քանի որ հաստատապէս որոշած ես Զինաստան երթալ՝ առանց վիրաբուժական ընթացքը աւարտելու, սիրով պիտի թելադրէի որ առանց ժամանակ կորսնցնելու ճամբորդութեան պատրաստութիւն տեսնելու սկսիս:

Ճիշդ հիմա իրապէս նուիրուած մարդոց պէտք ունինք ու ես կը հաւատամ թէ քու սիրտդ ուղիղ է Աստուծոյ առջեւ ու քու շարժառիթներդ մաքուր, այնպէս որ յապաղելու պէտք չունիս:

Ինծի կուգայ թէ քեզի դժուար պիտի ըլլայ առանց ու ես է մէկին օգնութեան Զինաստանի մէջ գործելու, ինչպէս որ է քու ծրագիրդ: Նոյնիսկ Մր. Լօպշիա չի յաջողեցաւ ձրի ճամ-

բորդել: Այդ շատ դժուար խնդիր մըն է: Վաթսուն ոսկի պէտք է մէկ անհատի մը համար: Եթէ պատրաստ ես ինքզինքդ այս գործին նուիրելու՝ ամենայն ուրախութեամբ խնդիրդ ընկերութեան պիտի ներկայացնեմ: Կարելորքայլ մըն է որ շատ ու լուրջ աղօթքի կը կարօտի:

Տէրը պիտի առաջնորդէ: «Այդ քու գործութեամբդ» շուտով գնա:


Արդ մնա՛մ, սիրելի Տէր,

Ճշմարտապէս քոյդ

ԶԱՐԼՍ ՊԸՐՏ

(Շարունակելի)

Ժարգմ. Ն. Մ.



ՏԵՐՈՋ ԱՐՏԻՆ ՄԷՋ

Եկէ՛ք եղբարք Տէրոջ արտին
Մէջ, աշխատինք ժիր, հոգեվին,
Տեսէք արեւը կ'արտորայ,
Ահա շուտով գիշերն կուգայ:

Եկէ՛ք եղբարք Տէրոջ արտին
Մէջ միշտ ցանենք սերմ թանկագին,
Արեն ծագի, անձրեւ թող գայ,
Ահա շուտով գիշերն կուգայ:

Եկէ՛ք եղբարք Տէրոջ արտին
Մէջ, մեր ջանքերն ընդարձակին,
Չը մշակուած երկիրն հերկենք,
«Ահա գիշերն կուգայ» կրկնենք:

Եկէ՛ք եղբարք մենք հաւատքով,
Տէրոջ արտին մէջ աղօթքով
Հերկենք, ցանենք, զի Տէրն կուգայ,
Հոգ չէ եթէ գիշերն ալ գայ:

Ժ. Կ. Պ.



ՄԱՆԿԱՆՑ

ԿԻՐԱԿԻՆ ՍՈՒՐԲ ՊԱՆԵԼ

Ժընեցի երիտասարդ աշխատաւոր մը սկսած էր Տէրունական օրը նկատի չառնել և պաշտամունքներուն ներկայ չըլլալ:

Օր մը սակայն՝ եկեղեցի դացած ըլլալով մանկութենէն զինքը կրթող հովիւին գորաւոր մէկ քարոզը լսեց, որով ան խստօրէն կը դատապարտէր Կիրակին սրբապղծելու մեղքը:

Երիտասարդը որոշեց այլեւս Կիրակի օրերը չգործել, և յաջորդ Կիրակիէն սկսեալ գործատեղիին մէջ իր տեղը պարապ մնաց:

— Ի՞նչ պատահեցաւ, հարցուց վարպետը երկուշաբթի առաւօտ, երէկ զործի չեկար: Կ'երեւի ուրախութիւն ընելու գացած էիր, անա՛նկ է:

— Ո՛չ, վարպետ, եկեղեցի գացած էի:

Վարպետը զայն ծաղրեց նախ, յետոյ աւելցուց.

— Ուրիշ անգամ չփորձուիս այդպիսի բան ընելու:

Երբ Կիրակին հասաւ, գործատեղիին մէջ երիտասարդին տեղը դարձեալ պարապ էր: Յաջորդ օրը վարպետը մեծապէս բարկացած յայտարարեց թէ եթէ շարունակէ, զինքը գործէն պիտի հանէ:

Այդ շաբաթ սահեցաւ, բայց կարելի է երեւակայել թէ ի՞նչ տագնապներ անցուց երիտասարդ աշխատաւորը, որ իր հացը կորսնցնելու վրայ էր:

Ահա՛ և Կիրակին: Նա արդէն հագած է իր գործի հագուստը և կը պատրաստուի առտուն՝ կանուխ իր գործին գլուխը երթալ... սակայն ո՛չ, իր խղճին ձայնը կը յաղթէ նորէն:

— Եկեղեցի պիտի երթամ, ի՞նչ կ'ուզէ թող պատահի:

Յաջորդ օրը տղան ուղղուեցաւ իր գործատեղիին և իր տեղը նստաւ, սպասելով գալիքին՝ ժամը տասին ատենները գործատէրը զայն իր գրասենեակը կանչեց:

— Գիտես թէ քեզի ինչ ըսած էի: Ահա հաշիւդ, գործիքներդ առ և ուրիշ տեղ փնտռէ:

Խեղճ տղան գործիքները ծրարեց, իջաւ սան-
գուխէն և ինքզինքը գտաւ փողոցին մէջ: Տխուր
խորհուրդներ գրաւեցին միտքը, իր տարիքը
ունեցող գործաւոր մը անգութօրէն վռնտուած,
առանց գիտնալով թէ ո՛ւր կարելի էր գործ
գտնել հիմա: Ու դանդաղօրէն իր սենեակին
ճամբան ձեռք առաւ, երբ յանկարծ հանդիպե-
ցաւ ուրիշ գործատեղի մը աշխատող իր մէկ
ընկերոջը:

Վերջինս անոր տխուր երեւոյթը նշմարելով
պատճառը հարցուց: Տղան թեւին տակի ծրարը
ցուցնելով յարեց, «Կիրակի օրերը աշխատիլ
չուզեցի»:

— Ի՛նչ խղճահարութիւններ ունիս դուն ալ,
պատասխանեց ընկերը, նայինք սակայն թէ
կարելի՞ է ուրիշ տեղ մը գտնել:

Յետոյ իր աշխատանոցը երթալով իր վար-
պետին պատմեց շուտով ինչ որ պատահած էր:

Այս վերջինը արձակուած տղան իրեն կան-
չելով տեղ մը խոստացաւ անոր, ու միեւնոյն
ժամանակ ազատութիւն տուաւ իր խղճին հնա-
զանգելու և Կիրակի օրերը սուրբ պահելու:

Երիտասարդը սրտանց փառք տուաւ Աստու-
ծոյ և անկէ վերջ հաւատարմօրէն շարունակեց
պահել Տէրունական օրը, համոզուած ըլլալով
որ մարդ իր կրօնական պարտականութիւնները
կատարելով բնաւ բան մը չի կորսնցներ, և թէ
ընդհակառակը Աստուած ամէն բաները բարիի
գործակից կ'ընէ անոնց որ զիսքը կը սիրեն ու
իր պատուիրանքին հնազանդ կը գտնուին:

Թարգմ. Յ. Ք.

ԿԵՑԷՔ, ՆԱՅԵՑԷՔ, ՄՏԻԿ ԸՐԷՔ

Երկաթուղիի մը պաշտօնեաները շատ նեղ-
ուեցան լսելով որ շատ մարդիկ կը մեռնին կամ
կը վիրաւորուին այնպիսի տեղեր, ուր իրենց
գիծը գիւղական ճամբաներ կը կտրէ: Այդ տե-
ղերը նշանատախտակներ հաստատուած էին,
բայց կ'երեւի թէ մարդիկ ուշադիր չէին եղած
անոնց: Վերջապէս երկաթուղիի պաշտօնեաները
մեծագումար դրամ խոստացան այն անձին որ
լաւագոյն գաղափարը թելադրէր այդպիսի տե-
ղեր հաստատելի նշանատախտակի մը նկատ-
մամբ. նշանատախտակի մը, որ անվրէպ ուշա-
դրութիւն գրաւէր և անցորդներն զգուշացնէր
իրենց անձին ապահովութեան համար: Մրցա-
նակը շահեցաւ մարդ մը, որ այդ նշանատախ-

տակին համար թելադրեց մեր վերնագրին չորս
բառերը:

Աստուածաշունչին մէջ շատ պատմութիւններ
կան որ երկաթուղիի անցքի այդ նշանատախ-
տակին կը նմանին, վասն զի կ'ըսեն մեզի՝ երբ
մտիկ ընենք, «Ահա տեղ մը, ուր շատ մարդիկ
իրենց կեանքը խորտակեցին, կամ կորսնցուցին
մէկ քանին այն լաւագոյն պարգեւներէն զորս
Աստուած կուտայ իր զաւակներուն»: Կեցէք,
որպէս զի միեւնոյն սխալը չգործէք. Նայեցէք,
որպէսզի տեսնէք թէ ի՛նչ է վտանգը. Մտիկ
ըրէք պատգամին զոր Աստուած ձեզի կը ղրկէ
իր Խօսքին միջոցով և ձեր ծնողներուն, ուսու-
ցիչներուն ու խիղճերուն միջոցով:

Կեցէք, երբ կը փորձուիք բան մը ընել որ
գիտէք թէ ձեզի վնաս պիտի ընէ: Աստուծմէ
խնդրեցէք որ ձեզ զօրացնէ և «Ո՛չ» ըսել տայ:
Նայեցէք որ ազնիւ ու օգտակար բաներ գտնէք
ընելու և զօրութիւն խնդրեցէք որ կարենաք
ընել զանոնք լաւ և սիրով: Մտիկ ըրէք ծառա-
յութեան կոչերու, և միշտ պատրաստ եղէք ձեր
բաժինը կատարել: Ընելն է մեծ բանը, վասն զի
եթէ ընէք ինչ որ ուղիղ է և շարունակէք այդ-
պէս, պիտի սորվիք սիրել ու փնտռել Աստուծոյ
մեծագոյն ու լաւագոյն շնորհքները:

«Շին ժամանակի Պատմութիւններ»էն

ՍՏԱՑԱՆՔ

HAIASTAN — Revue mensuelle de la
Jeunesse Arménienne. Այս Ամսաթերթը գեղե-
ցիկ ձեռնարկ մըն է ազգասիրական, որուն
նպատակն է Ֆրանսայի մէջ ապրող և դաստիա-
րակուող պատանեկութեան և երիտասարդու-
թեան ծանօթացնել հայ ազգին փառապանծ
անցեալը, անոր զրականութիւնն ու զրագէտները
և քաղաքական, կրօնական մեծ դէմքերը:

Թերթ մըն է որ Ֆրանսաբնակ ամէն ընտա-
նիքի մէջ մուտ գտնելու է, մանաւանդ այն
ընտանիքներուն մէջ, ուր նորահասներ կան
անձանօթ տոհմային պատմութեան և զրակա-
նութեան: Տարեկան բաժանորդագրութիւնն է
Ֆրանսա և գաղութներ 25 ֆրանք, արտասահ-
ման մէկ տօլար:

Գրել՝ Monsieur l'Administrateur

H. Keusseyan
51, Rue du Caire

Paris (2°)

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

ՍԱՄՈՒԷԼ ԵՂԲ. ՊԱԳԳԱԼԵԱՆԻ

ՏԵՂԵԿԱԳԻՐԸ



(շարունակութիւն անցեալ թիւէն)

Մեր նոր սերունդը. — Եկեղեցիները միշտ խոնուած գտայ ոչ միայն չափահաս այրերով և կիներով, այլ նաև երիտասարդներով, պատանիներով և մանկանց երամակներով: Միշտ արդար հպարտութեան մը յուզումը ունեցայ ի տես մեր ազգային ու եկեղեցական յոյսը կազմող այս դասերուն: Մանաւանդ որ անոնց մեծամասնութիւնը կիրթ ու դաստիարակեալ են: Այս կարգէն ոմանք արդէն տեղական զոլէճներու և դպրոցներու մէջ կը պաշտօնավարեն: Այլք ուրիշ վայրերու մէջ պաշտօնի կոչուած են: Եւ ուրիշներ խանութպան կամ արհեստաւորներ են: Հոս յարգանքի ու երախտագիտութեան տուրք մը կայ, զոր պարտինք ներկայացնել տեղւոյս հոգեւոր և ազգային մեծերուն, ինչպէս նաև ծնողքներուն, որոնք հակառակ անձուկ պարագաներու, գերագոյն ճիգ մը ըրած են մեր նոր սերունդը դուրկ չձգելու հաւատքի, բարեկրթութեան և ուսումի շնորհներէն:

Տնտեսական վիճակը. — Քանի մը տարիներ ատաղ Սուրիոյ հայութեան տնտեսականին շուրջ ատաղ լուրերնիս խիստ մտահոգիչ էր: Ներկայիս, փա՛ռք Աստուծոյ, հացի, հանդերձի և բնակարանի այդ սուր տագնապը չափով մը մեղմացած է: Այս սակայն չնշանակեր թէ անհետացած է: Շատ խեղճ ընտանիքներ կան դեռ: Օրուայ հացի կարօտ, ծայրահեղ թշուառութեան մէջ տուայտողներ պակաս չեն: Նախկին կիսաքանդ գաղթականներուն մէջ դեռ իրենց դժբաղդ զոյուլթիւնը քաշկոտող ողորմելի տուններ տեսայ: Տեսայ կամխացած երեսներով մայրեր, մո՛ւթ, խոռոչացած ու վշտալի աչքերով, որոնց նայողը կը տառապի: Տեսայ հիւանդկախ ու նուաղկոտ հայրեր, հնամաշ, խուռացած հանդերձանքով: Տեսայ ցնցոտիներու մէջ փաթթուած աղջնակներ ու ծուէնածրար մանչեր՝ բոկոտն, գլխաբաց ու փոշեթաթալ: Ափսո՛ս, հայ վերապրող ծառին այս նոսնոցիկ կոկոնները գուցէ չբացուած թռչնին: Քաղաքիս շրջակայքը կառուցուող նոր գաղթականներու բնակիչներն ալ գերծ չեն ար-

ցունքէ: Աւարտած բնակարաններու կողքին՝ կը տեսնուին կամխքի պէս վեր ցցուող աղիւսապատեր առանց տանիքի, առանց պատուհաններու և առանց դրան: Այս լացնող տեսարանը կրակէ հարցում մը դարձաւ ինծի. — Դեռ շարունակուող այս կենդանի ողբերգութիւնը՝ ընդվզեցուցիչ բողոք մը չէ՞ ազգերու անարդարութեան և քրիստոնէից անտարբերութեան հանդէպ: Տաւուտիյէ (քաղաք Դաւթի) գաղթաւանին գառիթափին վրայ, բարեկամս ինծի կ'ըսէ. «Դարերով և շարունակաբար զլխէն մինչեւ ոտքը զարնուող այս ժողովուրդին հարուածը այնքան անօրինակ է և մեծ, որ անոր վերականգման համար՝ նոյնքան մեծ և անօրինակ օգնութիւն մը պէտք է»:


A. C. O. — Մեր ազգին վէրքը փաթթելու և ցաւերը ամոքելու մէջ՝ մօր մը դերը կատարած է Տօքթ. Պէոսնի միսիոնարութիւնը: Այս է պատճառը անշուշտ, որ մեր գործը լայնօրէն ճանչցուած, գնահատուած ու սիրուած է ընդհանրութենէն: Տեղւոյս վրայ ըլլալու էք որ տեսնէք թէ ինչպէս իր գործերը իրեն համար կը վկայեն Ոչ միայն հարիւրաւորներ հազուեցուցած ու կերակրած է, այլ նաև ունի երկսեռ որբեր, որոնք շարունակաբար կը խնամէ, հանդերձ, կերակուր, ուսում և հոգեւոր դաստիարակութիւն տալով անոնց: Ունի որբեայրիներ և ուրիշ խնամեալներ: Հոս, ոմանց օգնած է տան տեղ առնելու: Հոն, ուրիշներու ձեռք տուած է նիւթապէս և բարոյապէս իրենց կիսաւարտ գործերը կամ բնակարանները լրացնելու: Ասդին, ինք կանգնած է շարք մը շէնքեր, բոլորովին անկարող ընտանիքներու կամ այրիներու պատսպարան ըլլալու համար: Ու դեռ շա՛տ...: «Քաղաք Դաւթի» երթալու համար, երբ բլուրն ի վեր մա՛զլցիք, հեռուէն պիտի նշմարէք գաղթաւանին ճիշդ կուրծքին վրայ բարձրացող կոթողատիպ ջրամբարը, զոր դարձեալ A. C. O. կը նուիրէ հոն խմբուած մեր ժողովուրդին: Այս ջրաբաշխ շինութիւնը, գեղեցիկ խորհրդապատկերը ըլլալ թուեցաւ ինծի այն Սրտին՝ զոր A. C. O. և անոք բարեկամները կը կրեն հանդէպ մեր տառապեալ ժողովուրդին: Եթէ այս միսիոնարութիւնը անանուն ընկերութիւն մը ըլլար, պիտի առաջարկէի զայն կամ «Բարի Սամարացի» կամ «Տարիթա» կոչել. Գործ. 9 : 30: Մոռնալու չենք նաև Frinds of Armenia կոչուած հայապատանդ լիակաւ ընկերութիւնը, որ նոյն նպատակով կը

Le Gérant : H. N. GHAZAROSSIAN

Imp. Y. ARMEN & Cie 39 Rue St - Savournin Marseille

ՔՐԻՍՏՈՍ ՄԵՐ ԿԵԱՆՔԸ

Դերմաներէնէ՝ Յ. Ն. Ղ.



1 Փառք Քեզ ամէն ատեն, Տէր
Խոստումդ յուզէ մեր սրտեր
«Ով որ փնտռէ Զիս, կեանք, յոյս»
Եմ ես» կ'ըսես ամենուս:

2 Բաղձանքը մեր նախահարց
Որք Քեզ պաշտել միակ հարց
Ըրին իրենց սուրբ կեանքին,
Հըլու կոչման երկնային:

3 Մենք եւս ըլլանք հաւտարիմ
Այդ սուրբ Վէմիդ հաւատքին
Մինչեւ որ Դուն կամքդ անվերջ
Ի գործ դընես սրբոց մէջ:

4 Ուրեմն եղբա՛րք, ընտրենք մեր
Ղեկավարն այս փառաց Տէր,
Մենք ալ ըլլանք գործիքներ
Արքայութեան օրհնաբեր:

գործակցի Ա. Շ. Օ. ի: Անկասկած մեր ազգը այս ատուել ուշադրութիւն դարձուի, մանաւանդ այս ժողովուրդը ընկերութիւններուն յաւէտ երախտապարտ շատ փափուկ օրերուն մէջ:

Տեղացիներու դիրքը հայերու հանդէպ. — Եթէ Արաբները կը համակրին ու կը գնահատեն հայերը, կարելւոր պատճառներէն մին, մեր ժողովուրդին անոնց հանդէպ բռնած խոհեմ ու բարեկամական դիրքն է: Իցիւ թէ այս կէտին հա

2. Դէպի ձեզիւրէ
2 Նոյեմբեր, Չորեքշաբթի կէսօրին կառք կը նստինք քոյր Հէտովիկ Պիւլի հետ: Հոն են մեր գործակիցները: Պիտի շարժինք: Քոյրը կը փորձէ աննշմար կերպով ցուցնել ինծի եղբօրս Ներսէ-

սին ալայլուող դէմքն ու լեցուած աչքերը, զոր արդէն նշմարած էի: Վերջին վայրկեանին, խեղդուած ձայնով կը յիշեցնէ ինծի առտուայ ընտանեկան ժողովի մեր աղօթանիւթը «Խնդրէ ինծմէ ու հեթանոսները քեզի ժառանգութիւն պիտի տամ, և երկրի ծայրերը քեզի ստացուածք», Սաղ. 2 : 8:

Ճամբու սկզբնաւորութեան՝ ոչ մէկ բան ուշադրութեան կ'առնեմ: Միտքս լեցուած է այս համարով: Անոր տարողութիւնը այնքան հսկայական կը գտնեմ, որ դժուար կ'ուզայ հաւատալը: Սակայն խոստում ընողը Ամենակարողն է: Եւ խոստումը կ'ըլլայ իր Որդւոյն Յիսուս Քրիստոսի: Օգտուելու համար հարկ է իւրացնել: Անհնարին խնդիրը կը լուծեմ Երգ. 6 : 3ով: Ու մինչ կը մտածեմ այն ամէն սքանչելիքներուն շուրջ, զոր Աստուած կրնայ ընել հաւատացողին (Մարկ. 9 : 22), նոյն իսկ անկարելիութիւններով լեցուն այս ժամանակներուն և այս անապատներուն մէջ, քոյրը կ'ընդհատէ խորհրդածութիւնս: Կը ցուցնէ ինծի իրարու յաջորդող արաբական գիւղեր, ուրկէ քշուեցան տեղահանուող հայ կնարաւանները անասնոց հօտերուն պէս: Ահա՛ Մէսքէնէ, ուր ֆիզիքապէս, և առաւել հոգեպէս ուժաւոր արքայականները կը համին նորէն ծեծուելու, նորէն անպատուելու, նորէն կողոպտուելու: Այս անգամ կողոպտուելու իրենց մանուկներէն, իրենց աղջիկներէն, իրենց հարսերէն: Կը տեսնեմ Ռազզաւն, Համմա'րը, Ջէնօպին: Ահա՛ Այն-թապուզ և դեռ քանի սպանդանոց հանգրուաններ...: Կ'անցնինք արագ: Քոյրը զարհուրելի բաներ կը պատմէ: Իսկ ես կ'ունկնդրեմ սառ սրտով, ինչպէս ապառաժը՝ ծառեր արմատախլող փոթորիկներու երգին: Ինչո՞ւ: Չեմ գիտեր: Գուցէ երկաթ կրունկներով կոխկոտուած ու պնդացած ժողովուրդի մը մէկ գաւաղը ըլլալուն համար: Վաղը սակայն անկարելի պիտի ըլլայ դիմանալը, ու ես պիտի փրկուիմ անգուպ: Եւ այն՝ որովհետեւ մենք կ'անցնինք այն ճամբայէն, ուրկէ մեր տառապեալները քալեցին նօթի՛, ծարա՛ւ, արեւահա՛ւ, մահամերձ...: Ու ալը ճամբան մեզ կը տանի Տէր-էլ-Ջօր:

Իրիկնամուտ է: Դեռ շատ ճամբայ ունինք իջեւան հասնելու Մեր ետեւ երկու հայ երիտասարդներ իրենց անցեալը կը թղթատեն: Միւսները ամբողջ անապատաբնակ ահալաւորներ են: Շուտով կը բարեկամանամ քովս նստող թուխ և պարթեւ արաբին հետ: Ապա միւսներուն հետ նոյն դիւրութեամբ: Հայ բարեկամը լաւ

դիտէ անոնց լեզուն ու թարգմանի պաշտօն կը կատարէ: Քանի մը օգտակար խօսքերէ վերջ, կոկորդը թրջելու համար շաքար մը կ'երկարեմ քովինիս: Մինչ սա՛ զննողի ձեռով ձեռքին մէջ կը դարձնէ, յաջորդը կը գրաւէ և կը նետէ բերանը: Կը ծծէ. կը կլլէ: Յանկարծ կը սկսի թքնել արագ: Մեղանչեց: Ռամազան է: Միւսները կը քահքահեն: Ինք որպէս թէ կ'ափսոսայ: Մինչդեռ աչքին տակէն կը ժպտի ինծի: Նոյն վայրկեանին կառքին մօտէն վաչկատու կիներ կ'անցնին: Նորագեղջը վատաբարոյ ինչ խօսքեր և շարժումներ կ'ընէ: Խեղճ կեղծաւոր, կ'ըսեմ ինքնիշխան, եթէ Մէքքէի մարգարէն մեղքը այնքան թեթեւ ու քաւութեան ճամբան՝ այնքան դիւրին ցոյց տուած չըլլար ձեզի, այդքան ալ հեշտութեամբ պիտի չկրնայիր թէ՛ մեղանչել, թէ ափսոսալ, թէ ծիծաղիլ և թէ նորէն մեղանչել միանգամայն: Իսլամը մեղքի տարողութեան վրայ ոչ մէկ ուղիղ ծանօթութիւն ունի: Իսկ Հո. 8 : 7-ը և Եբր. 9 : 22-ը կամ բուն իսկ խաչին նշանակութիւնը, շատ հեռու է իրենց բթացած հասկացողութենէն: Այս խորհրդածութեան մէջ էի երբ ծայր տուին երգի: Բայց կանչներին երգէ դուրս ամէն ձայնի կը նմանի: Կ'առաջարկեն որ ես ալ երգեմ: Կ'երգեմ մէկ-երկու համար ու կը լռեմ: «Գօիս, գօիս» (գեղեցիկ, գեղեցիկ)՝ ներով կը վարձատրեն դիս: Դարձեալ կ'սկսին իրենց թաւ, միալար և գլուխ ուռեցնող կանչերին: Կ'երգեն անընդհատ, կ'երգեն ժամերով, մերթ ալ խմբովին: Քոյրը կը տառապի, նոյնպէս և ես: Վարիչը կը բարկանայ, կը սաստէ: Բայց անօգուտ: Քովինս կ'ըսէ, մեր «անապատի մարտակոչ»ն է այս, ու կը շարունակեն: «Եփրա՛ւը, Եփրա՛ւը» կը ձայնէ մեր ետեւէն հայ բարեկամը: Կը գրաւուինք անապատին կուրծքին վրայ գալարուող լայն ջրին: Այո՛, Եփրատը: «Հայրենի գետ» կը մենախօսեմ ես ինծի, «Հայրենի գետ, դուն կուգաս մեր լեռներէն ու սարերէն կամաւորապէս մեր դահիճներուն դաշտերը ոռոգելու և անոնց սաստիկ ծարաւը յաղեցնելու: Այս ընթացքով, դուն ալ մեր օրհնեալ Փրկչին հետ աչք և ահանջ ունեցողներուն կը սորվեցնես. — Միրեցէք ձեր թշնամիները, օրհնեցէք ձեզ անիծողները, բարի ըրէք անոնց որ ձեզ կ'ատեն և աղօթք ըրէք անոնց համար որ ձեզ կը չարչրկեն ու կը հալածեն, որպէսզի ձեր երկնաւոր Հօրը որդիները ըլլաք»: Մատթ. 5 : 43-48:

(Շարունակելի)

ՍԱՄՈՒԷԼ Պ.